- Но это же святотатство!

- Не кипятись, Гарегин. Жаль, что опустилась до этого даже деревня...

Небо вызвездило.

Над вечным покоем зависла луна.

Гарегин набрал по сотовому телефону номер отеля и предупредил портье, что они заночуют в монастыре... Благо, смотритель оказался человеком радушным и предложил им чистую постель. Позавтракав у него же густым мацуном, Гарегин и Парандзем стали прощаться с любезным хозяином.

Выйдя из дома смотрителя, они с ужасом обнаружили, что за ночь хачкар Момика почернел.

- Мистика какая-то. Расскажи кому – не поверят.

- Никак греховность ночных гостей тенью легла на камень Момика.

- Это потому, Гарегин, что против солнца стоим.

Обошли хачкар со всех сторон. Его и впрямь за ночь как вычернило...

- И часто к вам наведываются эти?

Тёмная тучка грусти набежала на чело смотрителя.

- Среди них и племянник мой, бес попутал... Всё от отца-хапуги. Попраны обычаи наши, забыты традиции... Деньги, деньги, деньги! Народ от земли оторвался, работать отвык. Все хотят всё и сразу. А ведь земля, она и от бешенства лечит... Дурные мысли га-сит... Никак не втолкую им, что храм души молитвами возводится. И не в день един...

24 августа 2009 г.

Ашот САГРАТЯН.

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՏԱԶԻԹ

Ո՛չ թե խնջույքի կամ զրույցների,
Ո՛չ էլ արյունոտ հավաքույթների,
Ո՛չ էլ հարցերով դիմելու իրար,
Ո՛չ խրախճանքի բիրտ ու աղմկոտ
Ո՛հ, ո՛չ այս դատարկ բաների համար
Եկել են մարդիկ ծեր Հասուբի մոտ:
Ինչ-որ չարագործ նախանձ, տմարդի
Փլատակներում մի հին մզկիթի
Սպանել է ծեր Հասուբի որդուն.
Նրա դիակն են արդեն բերել տուն:
Կարգն է կատարվում հուղարկավորման,
Մոլլան է ձգում երգն իր տխրամած,
Մի սայլ է կանգնած նախաշեմին տան,
Եւ նրան հլու եզներ են լծված,
Բազմաթիվ հյուրեր՝ դարձած մի ամբոխ,
Բարձրաձայնում են հեկեկանք ու ողբ
Ու կուրծք են ծեծում: Եւ այս աիարկու
Ձայնից շփոթված ձիերը բակում
Ոտքերն են գետնին անհանգիստ զարկում:
Մարդիկ սպասում են: Եւ բոպեներ անց
Հայրն է դուրս գալիս՝ խմբով իր կանանց:
Եւ երկու չերքեզ դիակը սառած
Յափնջուն դրած բերում են առաջ,
Խնդրում են մարդկանց ճանապարհ բացել,
Դիակն են շտապում սայլի մեջ բարձել,
Զենք ու զրահն էլ դնում են հետը.
Մի ատրճանակ՝ դեռ լիցքավորված,
Դաշույնը սուրսայր, աղեղն ու նետը,
Թուրը պսպղուն՝ պողպատից ձուլված,
Որ ամուր լինի ննջեցյալ քաջի
Կայանը վերջին՝ նրա գերեզմանն,
Ու Ազրայիլը երբ նրան կանչի,
Ելնի քաջարի զինվորի նման:
Ճանապարհ ելան, ու շարժվեց սայլը:
Տխուր շքերթը լուռ հեծյալների
Գնում էր առաջ, զսպելով քայլը
Եւ թափն անհամբեր իրենց ձիերի...
Մարող երկինքը բոբ մայրամուտին
Ոսկեզօծում էր ժայռերն անսասան,
Երբ քարերով լի հովիտին մթին
Հոգնած, լռակյաց եզները հասան:
Եւ այդ հովիտում՝ լի թշնամանքով,
Որտեղ խոցեցին երիտասարդին,
Իր ստվերոտ գրկում գերեզմանը զով
Կընդունի նրա անխոս, սառը դին...
Դիակը արդեն հողին հանձնեցին,
Ծածկեցին հողով: Մարդիկ անաղմուկ
Շշնջում էին աղոթքը վերջին:
Հանկարծ հայտնվեց ալեհեր ծերուկ՝
Մի վայելչակազմ պատանի կողքին:
Մարդիկ եկվորին ճամփա են բացում,
Եւ նա, դիմելով վշտոտ հայրիկին,
Դանդաղ ու հանդարտ այսպես է ասում.
«Անցել է արդեն տասներեք տարի,
Երբ այցելեցիր աուլն օտարի,
Եւ ինձ հանձնեցիր մի մանկիկ մատաղ,
Խնդրեցիր կրթել այդ թույլ մանչուկին,
Որ դառնա չերքեզ ազնիվ ու խիզախ:
Քո զավակներից դու այսօր մեկին
Հողին հանձնեցիր այդքան վաղաժամ:
Բախտին հնազանդ, Հասո՛ւբ, եղիր դու,
Ահա բերել եմ քո երկրորդ որդուն:
Սոսկ նա է կարող այս կյանքում դաժան
Քեզ մխիթարել, օրդ զարդարել,
Նա՛ հենքդ պիտի լինի արդարեւ:
Դո՛ւ գնահատիր ջանքերս բազում
Ինքս ինձ գովել բնավ չեմ ուզում»:
Ծերունին լռեց: Եւ Հասուբն, իր խոր
Վիշտը հաղթելով, նայեց պատանուն:
Անունն էր Տազիթ: Կանգնած գլխիկոր
Հասուբի առջեւ, նա ձայն չէր հանում:
Հնազանդ կանչին, որ ինչեց հոգում,
Հասուբն իր վիշտն է հիմա ամոքում,
Հայրական սիրով գրկում պատանուն,
Ծերուկ ուսուցչին ասում է սրտանց
Շնորհակալ խոսքեր եւ ապա քիչ անց
Հրավիրում է ծերունուն իր տուն:
Եւ ուսուցչի հետ ամբողջ երեք օր
Քեֆ էին անում գյուղացիք բոլոր,
Որ հետո նրան ճանապարհ դնեն,
Ընծաներ տալով պատվեն ու օրհնեն:
Ու միտք էր անում Հասուբը. չէ՞ որ
Այս ծերուկին է ընդմիշտ պարտական,
Որ կրկին ունի ընկեր, օգնական
Եւ իր ոսոխին վրիժառու հզոր:

***

Անցնում են օրեր: Հասուբի սրտում
Ննջեցին արդեն խոհերը տրտում:
Բայց Տազիթը դեռ՝ օտար, անհաղորդ,
Հարազատ գյուղում կարծես լինի խորթ,
Օրն է անցկացնում, ասես մենակյաց,
Քայլում է անխոս, անցնում դաշտ ու սար
Այդպես եղջերուն՝ գյուղում կշտացած,
Մեկ է, նայում է միշտ դեպի անտառ:
Իսկ այս պատանին ժայռեր է սիրում,
Սարնիվեր ելնող կածանները նեղ,
Հուզում են նրան մրրիկը ձայնեղ
Եւ ալիքների ոռնոցն անդունդում:
Իսկ երբեմն էլ նա մինչեւ ուշ գիշեր
Սարի գագաթին նստում է մենակ,
Հայացքն է ուղղում դեպի հեռուներ,
Առնական ձեռքին գլուխը հենած:
Տեսնես ի՞նչ է նա երազում այնժամ,
Ո՞ր իղձն է նրան անընդհատ տանում,
Հողեղեն երկրից, տեսնեն, այս անգամ
Այդ ո՞ւր է կանչում միտքը պատանու...
Է՛հ, ի՞նչ իմանաս՝ հոգին խորն է, խոր...
Զահելն երազում մտում է ազատ
Քամուն է նման... Սակայն սիրտը հոր
Դժգոհ է մտում, խորհում անընդհատ.
«Ախր ո՞ւր մնաց գիտելիքը, ո՞ւր,
Կամ ուժը բազկի, միտքը նենգ ու սուր...
Ո՛չ խորամանկ է որդին, ո՛չ խիզախ,
Ըմբոստ է միայն եւ ծույլ է, ավա՜ղ:
Ո՛չ, իմ այս որդին իմ թափը չունի...
Թե՞ ինձ պարզապես խաբեց ծերունին»:

****

Մի օր էլ Տազիթն իր սիրած ձիուն
Հանում ախոռից, ընկնում է ճամփա,
Երկու օր-գիշեր նժույգով թամբած
Շրջում է ու նոր վերադառնում տուն:
Հայր
Ո՞ւր էիր, որդի՛ս:
Որդի
Այն ժայռոտ կիրճում,
Ուր Դարյալ գետն է շաչում-շառաչում:
Հայր
Եւ ի՞նչ:
Որդի
Լսեցի ձայնը Թերեքի:
Հայր
Չհանդիպեցի՞ր արդյոք վրացու
Կամ գուցե ռուսի:
Որդի
Հեռու ճամփեքին
Թիֆլիսցի մի հայ ապրանք էր բարձում:
Հայր
Թիկնապահ ունե՞ր:
Որդի
Ո՛չ, մենակ էր նա:
Հայր
Հապա դու ինչո՞ւ, տեսնելով նրան,
Չհարձակվեցիր, որ տեղում մնա,
Կամ չխեղդեցիր, ցատկելով վրան:
Գլուխն իջեցրած, նայելով գետնին,
Չպատասխանեց չերքեզի որդին:

***

Տազիթը կրկին թամբին է թռնում,
Երկու օր-գիշեր շրջում է մենակ
Եւ հետո միայն ետ վերադառնում:
Հայր
Ո՞ւր էիր:
Որդի
Եղա սարերում ճերմակ:
Հայր
Ո՞ւմ հանդիպեցիր:
Որդի
Բլուրի դիմաց
Տեսա մեր ստրուկին փախուստի դիմած:
Հայր
Ո՛հ, մեծահոգի իմ ճակատագի՛ր...
Հապա ո՞ւր է նա: Մի՞թե դու նրան
Կապած, քարշ տալով ետ չբերեցիր:
Տազիթը կրկին կանգնած է անձայն:
Մռայլվեց Հասուբն, իր ցասումը լուռ
Դեռ թաքցնելով, միտք արեց տխուր.
«Ո՛չ, այս պատանին, ինչ էլ որ լինի,
Եղբորն սպանված չի փոխարինի:
Ավա՜ղ, Տազիթը չգիտի իսկի,
Ինչպես են սրով ձեռք բերում ոսկի:
Այսպես զբոսնելով օրեր ու տարի,
Նա գույքիս, կայքիս ի՞նչ կգումարի:
Նա գիտի միայն առանց մի ջանքի
Դիտել աստղերը, փրփուրն ալիքի:
Նա չի հարձակվի, որ առանց վախի
Զեռք բերի ավար, ձիեր ու նախիր,
Նա ստրուկներին կռվով չի գերի,
Ու նավին բառնած իր հետ չի բերի»:

***

Իր ձին է թամբում Տազիթն ու նորից
Անհետանում է, ու երկու օրից
Տուն վերադառնում՝ դիակի նման
Գունատ... Ու հայրը, տեսնելով նրան,
Հարցով է դիմում, սպասում պատասխան:
Հայր
Աա՛, ո՞ւր էիր:
Որդի
Գնացի հեռու՝
Եղա Կուբանին կից անտառներում:
Հայր
Ո՞ւմ հանդիպեցիր:
Որդի
Այն չարագործին:
Հայր
Ո՞ւմ, ո՞ւմ: Կրկնի՛ր:
Որդի
Եղբորս դահճին:
Հայր
Սիրելի որդուս դահիճի՞ն դաժան:
Հապա բե՛ր նրա գլուխն անարժան:
Այդ զանգը, Տազի՛թ, թող մոտս մնա՝
Նայեմ, հագենամ...
Որդի
Բայց մարդասպանը
Անզեն էր, հայրի՛կ, վիրավոր, մենակ...
Հայր
Անշուշտ, լսեցիր մեր արյան ձայնը...
Չէ՞ որ տապալվեց գետնին այդ շունը,
Եւ դու խրեցիր քո սուր դաշույնը
Ու պտտեցիր նրա կոկորդում,
Ու տեսար, ինչպես արյունն է հորդում,
Ըմբոշխնելով այդ պահն երջանկաբեր:
Էլ չեմ համբերում... Դե՛հ, գլուխը բե՛ր...
Բայց լուռ էր որդին, չէր կարող խոսել:

Ու հայրը դարձավ գիշերից էլ սեւ,
Նայելով որդուն, նա բացականչեց.
«Կորի՛ր աչքիցս, դու իմ որդին չես,
Դու չերքեզ էլ չես, այլ թոշնած ջադու,
Վախկոտի մեկն ես, ստրուկ ես, հայ ես դու: *
Անիծյա՛լ... Կորի՛ր, որ էլ չլսի
Ոչ ոք եւ ոչինչ վախկոտիդ մասին:
Թող քեզ ամենուր թշնամի սպասի,
Սպանված եղբայրդ ցատկի քո ուսին,
Որպես արյունոտ կատաղած կատու,
Ու դեպի անդունդ քեզ քշի, եւ դու
Կսկիծով վառված անընդհատ վազես,
Խոցված-վիրավոր եղջերուի պես,
Երեխաները գյուղերից ռուսաց
Թող անարժանիդ, պարանով որսած,
Տանջեն, ծվատեն, թավալեն, քարշ տան
Թակարդը ընկած գայլուկի նման:
Որ դու... Դե կորի՛ր, էլ չտեսնեմ քեզ,
Որ իմ աչքերը էլ դու չպղծես»:
Ասաց ու գետնին պառկեց, աչքերը
Փակեց ու մնաց մինչ գա գիշերը:
Իսկ երբ վեր ելավ, երկնքին կապույտ
Իջել էր մռայլ եւ անանց մի մութ,
Լուսինն՝ այդ զարդը երկնակամարի,
Արծաթ էր սփռում գագաթին ժայռի:
Ու երեք անգամ, որ Տազիթը գար,
Ձայն տվեց նրան, պատասխան չկար:

***

Բնակիչները խորին կիրճերի
Հովիտ են եկել լեռնցուն վայել
Զվարթ խաղերի, մրցույթ-վեճերի.
Ձիերը հեծնած չերքեզներ ջահել
Սկսում են փոշոտ վազքը սրընթաց,
Փափախն ընկերոջ խոցում են նետով
Կամ էլ մի խալի եռակի ծալված,
Կտրում սրի մեկ հարվածով, հետո
Կռխի են բռնվում պատանիք թիկնեղ,
Հետո պարում են: Կանայք, աղջիկներ
Երգեր են երգում, աղմուկն անտառի
Խուլ արձագանքն է այդ երգ ու պարի:
Բայց մի ջահելի հայացքը պաղել,
Չի տեսնում կարծես ոչ մի զվարճանք,
Նրան չեն գերում ո՛չ նետ ու աղեղ,
Ո՛չ էլ ձիերի մրցույթ կամ վարժանք:
Եւ աղջիկներից մեկը կա, որ լուռ
Մնում է անշարժ, գունատ ու տխուր:
Նրանք երկուսով ամբոխից անդին
Կանգնել են առանց շուրջը նայելու:
Տղան զավակն է այն վտարանդի,
Աղջիկն էլ նրա սիրուհին հլու...
Ո՛հ, մի ժամանակ երկուսով թաքուն
Հանդիպում էին նրանք սարերում:
Նա հուր էր խմում, որպես քաղցր թույն,
Որ երազանքի ճամփա է հարթում:
Եւ գեղեցկուհին գերում էր, գերում,
Շփոթ հայացքով նրան հմայում,
Երբ զրուցելիս ընկերուհու հետ
Ճամփան էր դիտում, բայց իսկույն եւեթ
Նստում էր անխոս եւ էլ չէր նայում,
Կամ երբ նա՝ կանգնած զով աղբյուրի մոտ,
Որ ջուր է բերում բարձունքից քարոտ,
Մեկնում էր ջրին իր կուժը դատարկ
Ու երկար պահում հոսող ջրի տակ:
Երբ տղան տեսավ, որ էլ ուժ չկա՝
Հաղթել հույզերը սիրահար սրտում,
Նա խոնարհ եկավ հոր մոտ աղջկա,
Ասաց. «Աղջկադ վաղուց եմ սիրում:
Կարոտս հաղթել էլ ուժ չմնաց,
Վաղուց եմ ապրում ես որբ ու մենակ:
Հայրի՛կ, իմ սերը դու այժմ օրհնի՛ր:
Աղքատ եմ, սակայն ջահել ու զորեղ,
Աշխատել գիտեմ: Եւ էլ չեն լինի
Մեր հյուղում երբեք սովահար օրեր:
Որդի եւ ընկեր ես քեզ կդառնամ,
Որ հենվես դու իմ նվիրյալ ուսին,
Կլինեմ ես քո որդոց բարեկամ,
Իսկ քո աղջկան՝ սիրող ամուսին»:

Թարգմ.՝ Ռաֆայել Պապայանի
( ) Ընդգծումը մերն է: Խմբ.*

«ՎԱԽԿՈՏԻ ՄԵԿՆ ԵՍ, ՍՏՐՈՒԿ ԵՍ, ՀԱՅ ԵՍ ԴՈՒ»

Ա. ՊՈՒՇԿԻՆ

Նրանք, ովքեր հաճախ բերանացի փոխանցված այդ արտահայտությունը հիմք ընդունելով շտապել են իրենց բացասական վերաբերմունքն արտահայտել Պուշկինի հանդեպ, անկասկած է, որ հիմա, Պապայանի այս հրաշալի թարգմանության միջոցով ընկալելն պոեմում անհրաժեշտաբար հայի մատնանշելու առիթը՝ իր էությամբ ու բովանդակությամբ, պիտի հրաժարվեն իրենց թյուր կարծիքից:

Ընթերցելով պոեմը, ակնհայտ է դառնում, որ Պուշկինը, տվյալ դեպքում չերքեզի բերանով «հայ» ասելով՝ նկատի ունի միայն ու միայն վեհանձնության դրսեւորում, բարոյական վեհ հատկանիշներ ունեցող անձ: Բայց այստեղ հարց է առաջանում՝ ինչո՞ւ հատկապես հայ, այլ ոչ թե, ասենք, վրացի, ռուս կամ գերմանացի, կամ առհասարակ առանց որեւէ ազգություն նշելու (կարող էր, չէ՞, պարզապես ասել «Վախկոտի մեկն ես, ստրուկ ես» եւ վերջ): Ինչո՞վ է սա բացատրվում: Հազիվ թե Պուշկինը պատահաբար, առանց որեւէ հիմքի, հենց այնպես հիշատակեր հատկապես հային: Ռ. Պապայանը Պուշկինի պոեմի թարգմանությա՞ն առիթով ուղեկցող «Վիրավորա՞նք, թե՞ մեծարանք» հոդվածում նշում է, որ Պուշկինը անձնապես շատ լավ ծանոթ է եղել ու սերտ կապեր ունեցել հայազգի մի շարք գործիչների (Դավիթ Աբամելիք, Լազարյաններ, Գրիգոր Զաքարյան) հետ: Ավելին, Պուշկինը ականատես է եղել, թե ինչպես ղարաբաղյան գունդը վերադառնում է մարտից իր հետ բերելով թուրքական ութ դրոշ: Հետեւաբար, ինչպես իրավամբ կարծում է Ռ. Պապայանը, Պուշկինը չէր կարող հայերին վախկոտ կամ ստրուկ որակել:

Սակայն հային հիշատակելու համար այսքանը դեռ բավարար չէ: Հասկանալու համար, թե ինչու է Պուշկինը այդպես վարվել, անհրաժեշտ է անդրադառնալ Հյուսիսային Կովկասում եւ առհասարակ Կովկասում հայ տարրի ունեցած դերակատարությանը պուշկինյան, այսինքն՝ 19-րդ դարի սկզբում եւ դրան նախորդող՝ 18-րդ դարի երկրորդ կեսի ժամանակաշրջանին:

Այս առումով կարեւոր ենք համարում հիշատակել Ղրիմին վերաբերող մի հարց: Բանն այն է, որ Անիի կործանումից հետո, դեռեւս բյուզանդական շրջանում, հայերի մեծ մասը՝ գաղթեց Արեւելյան Եվրոպա (այդ թվում՝ Հունգարիա, Տրանսիլվանիա, Լեհաստան), մասնավորապես՝ Ղրիմ, որտեղ հաստատվել էր հոծ հայություն, որն այնտեղ ուներ լուրջ ազդեցություն ինչպես տնտեսական ու մշակութային, այնպես էլ քաղաքական կյանքում: Եվ երբ 1768-1774թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսական կայսրությունը՝ հանձին Եկատերինա Երկրորդ կայսրուհու եւ ռուս իշխան Գ. Ա. Պոտյոմկինի, որոշում է Ղրիմը միացնել Ռուսաստանին, 1778-ին Ղրիմից տեղահանում է հայությանը (ինչպես նաեւ քրիստոնյա այլ ազգերի): Հայերը 1780-ին, բնականաբար կառավարության հովանավորությամբ, հիմնում են հանրահայտ Նոր Նախիջեւան բնակավայրը: Ռուսական այս քաղաքականությունը հասկանալու համար դիմենք ռուս մի այլ գրողի՝ Վ. Պիկուլին, որն իր «Ֆավորիտը» պատմավեպում Պոտյոմկինի՝ Սուվորովին ուղղված նամակում գրում է. «Հելլենները թող գինի քաշեն ու կեֆալ որսան, նրանք առեւտրական մարդիկ են, ճարպիկ, հավատա, որ չեն կորչի: Իսկ հայերը նոր վայրերում... թող արհեստները զարգացնեն, ինչպես, օրինակ... մետաքսե ու բամբակե կտոր գործեն, կաշվից սաֆյան մշակեն, զանազան ասեղնագործություններ անեն, որոնցում այնքան հմուտ են հայուհիները»: Պատահական չէ, որ նամակում Պոտյոմկինը հատկապես կարեւորում էր նակչությանհոգեւորզարգացման խնդիրը հավելելով. «Հայաստանից քահանաներ պետք է բերել նրանց մոտ»:

Այս տեղահանությամբ Ռուսական կայսրությունը լուծում էր իր համար չափազանց կարեւոր երկու խնդիր. առաջին պայմաններ էր ստեղծում Ղրիմը Ռուսաստանին միացնելու համար, եւ երկրորդ՝ արդեն իր կազմում գտնվող Հյուսիսային Կովկասում իր դիրքերն էր ամրապնդում: Այսինքն՝ ինչպես տեսնում ենք, այդ չափազանց կարեւոր խնդիրները լուծելու համար օգտագործում էր հայերին:

Ինչ վերաբերում է Հյուսիսային Կովկասին, ապա անհրաժեշտ է նշել, որ 17-18 դարերում Կովկասում խիստ բացակայում էր քաղաքական կայունությունը պայմանավորված սոցիալ-տնտեսական իրավիճակով, մի քանի տասնյակ տարբեր ազգերի համակեցությամբ, քաղաքակրթական ցածր մակարդակով: Կովկասում ապրող ազգերը հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ, չունեին քիչ թե շատ զարգացած տնտեսություն: Ինչպես նշում է Ա. Պուշկինը. «Մենք շրջապատված ենք մանկական մոլորությունների խավարում գոյությունը քարշ տվող ժողովուրդներով» (մեջբերումը ըստ Պապայանի վերը նշված հոդվածի): Ավելի լավ չես ասի «մանկական մոլորությունների խավարում»: Ահա այդ խավարում չափազանց տարածված էր ալան-թալանը, հատկապես անասնագողությունը (ձիագողությունը), արյան վրեժը եւ այլն, որն էլ ընդհանուր առմամբ հանգեցնում էր անընդհատ խորացող ազգամիջյան բախումների: Ի միջիայլոց, ասվածը հիմնավորվում է նաեւ Պուշկինի բանաստեղծական վկայությամբ. «Ավա՛ղ, Տազիթը չգիտի իսկի, / Ինչպես են սրով ձեռք բերում ոսկի: / Այսպես զբոսնելով օրեր ու տարի, / Նա գույքիս, կայքիս ի՞նչ կգումարի»: Կամ անասնագողության (ձիագողության) մասին. «Ձեռք բերի ավար, ձիեր ու նախիր»: Արյան վրեժի մասին գրում է. «Էլ չեմ համբերում...Դեհ, գլուխը բեր...» (խոսքը Հասուբի տղային սպանողի գլուխը բերելու մասին է): Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կովկասյան լեռնաբնակների պատկերացմամբ, այդ «մանկական մոլո-

⊃24

23➲

րությունների» հատկանիշները համարվում էին ճշմարիտ իգիթի բարեմասնություններ, այլ ոչ թե մերժելի, արգահատելի արարքներ: Ռուսները շատ լավ գիտակցում էին, որ այդ հսկայական տարածքում միայն ռազմական ուժով կարգուկանոն հաստատել հնարավոր չէր, անհրաժեշտ էր, եթե օգտագործենք ներկայիս տերմինաբանությունը, տնտեսական, մշակութային, քաղաքակրթական ինտերվենցիա: Ահա հենց այդ խնդիրը լուծելու համար խելամտորեն օգտագործեցին հայությանն ու մյուս քրիստոնյա ազգերին՝ նրանց շահագրգռելով բազմապիսի արտոնություններ տալով, որ շարունակեն ապրել տարածաշրջանում: Եվ հայերը, հաստատվելով այդ տարածքում, սկսեցին զբաղվել առեւտրով, հողագործությամբ (մասնավորապես՝ այգեգործությամբ), արհեստներով եւ բազմաթիվ այլ գործերով: Հասկանալի է նաեւ, որ բնակություն հաստատելով հայերը զարգացնում էին իրենց մշակույթը, հիմնում դպրոցներ, մշակութային տարբեր տեսակի օջախներ, կառուցում եկեղեցի ու բնակելի տարածքներ: Հայերի այս բազմազան ստեղծարար գործունեության հետեւանքով Կովկասում սկսեց աստիճանաբար զարգանալ տնտեսությունը, ինչն էլ բարերար ազդեցություն ունեցավ ամբողջ հասարակական հարաբերությունների զարգացման ոլորտի վրա: Եվ, որ ամենակարեւորն է, մյուս ազգերը նույնպես ընդգրկվեցին այդ գործընթացում աստիճանաբար ձեռք բերելով համապատասխան քաղաքակրթական մակարդակ: Ի դեպ, նույնը կատարվեց նաեւ Ղրիմում՝ Ռուսական կայսրությանը միանալուց հետո, որտեղ հայերին տրվեցին բազմաթիվ արտոնություններ, ինչը նպաստեց Արեւմտյան Հայաստանից գաղթող հայերի՝ Ղրիմում բնակեցմանը:

Ինչպես տեսնում ենք, հայերի նկատմամբ տարվող ռուսական քաղաքականությունը մեծապես դյուրացրեց Հյուսիսային Կովկասի վերջնական յուրացումը:

Եւ եթե հիշենք, որ հայերը բնակություն էին հաստատել ամբողջ Հյուսիսային Կովկասի քիչ թե շատ հայտնի մեծ ու փոքր կենտրոններում, որոնցից շատերը անմիջականորեն ստեղծել էին իրենք կամ դրանցում ունեցել էին մեծ ներդրում, ապա պարզ կդառնա հայերի ազդեցության էական նպաստը հասարակական հարաբերությունների ամբողջ գունաշարի կարգավորման ու զարգացման հարցում: Նշենք նաեւ, որ Հյուսիսային Կովկասի մասին ասվածը, մեր կարծիքով, ամբողջությամբ վերաբերում է նաեւ Հարավային Կովկասին, որտեղ հայերը ունեցել են նույն դերակատարությունը, ինչ Հյուսիսային Կովկասում: Դրանում համոզվելու համար բավական է հիշել 18-19 դարերի Թիֆլիսն ու Բաքուն: Դրա կողմնակի վկայությունն է նաեւ Պուշկինի պոեմում ամենեւին ոչ պատահական հայտնված՝ «Թիֆլիսցի մի հայ ապրանք էր բարձում» տողը:

Հարկ եմ համարում նշել, որ հիշյալ ռուսական քաղաքականությունը նորություն չէր: Նման քաղաքականություն հայերի նկատմամբ վարել են թե՛ բյուզանդացիները, թե՛ պարսիկները եւ թե՛ այլոք: Մյուս կողմից, անհրաժեշտ է նկատել, որ նման քաղաքականությունը բացառություն չէ, այն կիրառվել է բազմաթիվ այլ ազգերի, օրինակ՝ հույների, հրեաների նկատմամբ:

Խոսելով հայերի Հյուսիսային Կովկասում ունեցած դրական դերակատարության մասին, թվում է, որ հայերս կարող ենք հպարտանալ այդ տարածաշրջանում ունեցած տնտեսական-մշակութային կարեւոր ազդեցությամբ, ինչպես նաեւ ակնկալել Ռուսաստանի հատուկ բարեհաճ վերաբերմունքը: Սակայն նման եզրակացություն կատարելուց առաջ թերեւս հարկ կլինի պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ այսօր հայերն «անհետացան» Լեհաստանից, Հունգարիայից, Ռումինիայից, Հնդկաստանից, Բիրմայից եւ բոլոր այն վայրերից, ուր ունեին հզոր համայնքներ, բազմաթիվ արտոնություններ, տնտեսական, հոգեւոր-մշակութային զարգացած գործունեություն, որի շնորհիվ էլ մեծ ազդեցություն այդ երկրների պետական, հասարակական կյանքում: Նույնը վերաբերում է նաեւ Ռուսաստանի, Վրաստանի հայ համայնքներին: Պատահականությո՞ւն է այդ ամենը, թե՞ օրինաչափություն:

Իհարկե, յուրաքանչյուր կոնկրետ երկրում հայ համայնքների վերացումն ունի միայն տվյալ երկրին հատուկ իր առանձնահատկությունները, սակայն այն հանգամանքը, որ այդ բոլոր երկրներում հայ համայնքները վերացել են կամ անգամ եթե գոյություն ունեն՝ կորցրել են իրենց երբեմնի ազդեցությունը, վկայում է այն մասին, որ անպայման այդ ամենի հիմքում կա որոշակի պատմական անհրաժեշտություն եւ օրինաչափություն: Մեր կարծիքով, այդ երեւույթի հիմնական պատճառն այն է, որ որքան էլ հայն իր բարեմասնություններով հանդերձ ցանկալի է եղել այդ երկրների համար, այնուամենայնիվ, միշտ եղել եւ մնացել է օտար, միշտ խոցելի, որովհետեւ իր աշխատասիրությամբ, արդար քրտինքով ձեռք բերելով որոշակի հարստություն առանձնացել է իր տեղական շրջապատից, դարձել, ինչպես ասում են, այդ շրջապատի «աչքի փուշը»՝ հատկապես ցածր կենսամակարդակ ունեցող երկրներում: Ելքն եղել է կա՛մ մերվել նրանց հետ, դառնալ նրանցից մեկը, այսինքն՝ ասիմիլացվել, կա՛մ հեռանալ: Երրորդը, կարծես թե, հնարավոր չէ:

Յուրաքանչյուր երկրում համեմատաբար հարուստներն ընդգրկվել են տվյալ երկրի վերնախավի, ազնվականության կազմում, վերջիններիս կողմից դրսեւորվել է որոշակի դրական վերաբերմունք ու հարգանք, եթե նրանք եղել են իրենց ազգակիցները, իսկ օտարները վայելել են այդ հարգանքը միայն որոշակի ժամանակահատվածներում: Սակայն նկատելի է նաեւ, որ տվյալ երկրի դժվարին վիճակներում (պատերազմներ, ճգնաժամային պայմաններ), իսկ այդպիսի վիճակներ լինում են բոլոր երկրներում, նրանք դարձել են թիրախ, հաճախ նրանց են վերագրվել այդ դժվարությունների ստեղծման պատճառները (օրինակ՝ հիտլերյան Գերմանիայում դրանք հրեաներն էին):

Խոսելով Ռուսաստանի համար հայերի կատարած, կարծում եմ՝ դրական աշխատանքների մասին, անհրաժեշտ է պարզել, թե ինչ եղավ հետո՝ արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին եւ ավելի ուշ: Եղավ այն, ինչ պետք է լիներ. այսինքն՝ Հյուսիսային Կովկասում, ինչպես նաեւ Ղրիմում Ռուսական կայսրության ամրապնդումից հետո գործում էր ռուսական իրավակարգը, ձեւավորվեցին կայսրության համար ցանկալի հասարակական, հոգեւոր-մշակութային, տնտեսական հարաբերություններ: Կյանքը մտավ ռուսական պատկերացումներին համապատասխան բնականոն հուն: Եվ այդ պայմաններում որեւէ ազգի (այդ թվում՝ ռուս) արտոնությունները կլինեին անհասկանալի, ուստի եւ դրանք վերացվեցին: Հայերը, իհարկե, կարող էին շարունակել ապրել, սակայն այլեւս պետք չէին ո՛չ հայկական եկեղեցիները, ո՛չ դրանք սպասարկող քահանաները (որոնց անհրաժեշտությունն այդքան կարեւորում էր Պոտյոմկինը), ո՛չ հայկական դպրոցները, ո՛չ էլ հայկական մշակույթը եւ, առհասարակ, ռուսներին հարկավոր էր իրենցը՝ ռուսականը (ուղղափառ եկեղեցին, ռուսական դպրոցը, ռուսական մշակույթը եւ այլն): Հայերը դարձան ընդամենը «կովկասյան ազգության» ներկայացուցիչներից մեկը: Ինչ վերաբերում է «կովկասյան ազգություն» գիտական առումով անիմաստ հասկացությանը, ապա անհրաժեշտ է հասկանալ, որ այդ անիմաստությունը դարձավ եւ մինչեւ օրս էլ որոշակի քաղաքական հիմնախնդիրներ լուծելիս շարունակում է մնալ ռուսական ներքին քաղաքականության իմաստը: Սակայն սա խոսակցության այլ թեմա է:

Հոդվածը գրելիս չանդրադարձանք պատմական աղբյուրներին, չվկայակոչեցինք հայտնի ռուս պատմաբաններին, այլ բավարարվեցինք միայն հիշատակելով հիմնականում Պուշկինին: Բանն այն է, որ դրանց անդրադառնալը՝ պարզապես կմեծացներ հոդվածի ծավալը՝ որեւէ նորություն չավելացնելով ասվածին: Նշենք միայն, որ ռուս մտավորականության մի զգալի հատված քաջածանոթ է այդ ամենին եւ տարբեր առիթներով հիշատակում է հայերի բարեմասնությունները, հատկապես հայկական միջավայրում, եւ արժանանում մեր համակրանքին: Ավելին, այդ ամենին շատ լավ ծանոթ է ռուս քաղաքական վերնախավը եւ հատկապես տարատեսակ ընտրություններից առաջ անպայման հիշում է հայերի կատարածը՝ ակնկալելով նրանց քվեն:

Ծանոթանալով հայերի եւ օտար պետությունների փոխհարաբերություններին վերաբերող հայ պատմիչների, պատմաբանների, գրողների եւ այլոց գնահատականներին՝ հաճախ կարելի է հանդիպել այսպիսի տեսակետ. հայերիս դավաճանեցին, մեզ հետ անարդար կամ անազնիվ վարվեցին, ծախեցին, այսօրվա ժարգոնով ասած «քցեցին», մոռանալով, որ յուրաքանչյուր պետություն հետամուտ է միայն իր շահին, հատկապես քաղաքական շահին: Երբեմն կարող է պաշտպանել նաեւ քո շահը, եթե միայն այն ձեռնտու է իրեն: Հետեւաբար ոչ թե պետք է նեղանալ, մեղադրել օտարներին, այլ սովորել վարվել նրանց նման՝ պաշտպանել սեփական ազգային, պետական, քաղաքական շահը: Այս հայտնի պնդումին (աքսիոմին, դոգմային, սկզբունքին) հետեւելով՝ մնում է կատարել միակ եզրակացությունը:

Մեր ստեղծարար անսպառ կարողությունները որքա՜ն երկար ներդրել ենք օտարի հողում՝ ժամանակավոր լինելու մեր զգացողությունը միպահ մոռանալով ուրախացել, հպարտացել ենք մեր հացեին արվող գովեստներից, դրանով կրկնապատկել մեր ջանքերը, ու հանկարծ, ուշ, շատ ուշ դարձյալ վերապրել նույն զգացողությունը՝ տվյալ վայրում մեր անհաստատուն լինելու իրողությունը: Ավետիք Իսահակյանի մտորումի հանգույն՝ «Հայրենիքից դուրս ամեն ինչ աշխարհի ծայրին է». խորհենք եւ գումարյալ ջանքերը Հայրենիքի՝ մեր միակ Կենաց տան շենացմանն ուղղենք:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

«ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏՅԱՆԸ ՆԱԽԱԴԵՊՆ ԷՐ ՆՅՈՒՐՆԲԵՐԳԻ»

Հայտնի ցեղասպանագետ, Զորյան ինստիտուտի տնօրեն, Հայաստանի ԳԱԱ-ի արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Վահագն Տատրյանի և թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամի համատեղ աշխատությունը՝ «Ստամբուլում «Իթթիհատ վե Թերաքիի» դատավարության արձանագրությունները» գիրքը, մեծ արձագանք է ունեցել Թուրքիայում:

- Պարոն Տատրյան, ինչո՞ւ Թուրքիան գնաց այդ քայլին և Առաջին աշխարհամարտից հետո ստեղծեց դատական մի մարմին, որը քննում էր Հայոց ցեղասպանության մեջ մեղսագործ քաղաքական գործիչների գործերը:

- Նախքան քեմալական շարժման սկիզբը և զարգանալը, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին, Թուրքիան ընկճված և հուսահատ վիճակում էր և մտավախություն ուներ, որ հայկական ջարդերի կապակցությամբ հաշտության պայմանները շատ ծանր պիտի լինեն իր համար՝ ոչ միայն որպես պարտված ազգի, այլև որպես ոճիրների գլխավոր դերակատար կառավարության: Այս մտավախությամբ, հաշտության պայմանները մեղմելու համար թուրք կառավարությունները 2 տարվա մեջ փորձեցին աշխարհին ցույց տալ, որ այս ոճիրները ընդամենը թուրք հեղափոխական փոքրամասնության գործն էին, և թուրք ժողովրդին չպետք է մեղավոր համարել այս կապակցությամբ: Այս առիթով որոշեցին գործնական քայլեր ձեռնարկել, և կազմվեց պատերազմական ատյան: Պատերազմական ատյանը մեծաթիվ նյութեր հավաքեց: Ինչպես հայտնի է, հանցագործությունների դեպքում նախաքննական շրջան կա՝ փաստահավաք, և այդ շրջանից հետո որոշում ընդունվեց, որ բավականին փաստեր կան դատը սկսելու համար: Փաստահավաք հանձնախումբը ղեկավարում էր Օսման Մասար անունով նախկին մի կուսակալ: Երկու ամսվա ընթացքում Մասարի այդ հանձնախումբը մեծ թվով փաստեր հավաքեց, հանձնախումբը մեծաթիվ վավերագրեր ձեռք բերեց: Ինչպես ասացի, թուրքերը պարտված էին, տրամադրված էին խոստովանություններ անելու, և Մասարի հանձնախմբի հավաքած նյութերը հիմք կազմեցին հետագա թուրքական պատերազմական ատյանի ամբաստանագրին:

- Այս դատական գործընթացը փաստորեն սկսվեց 1918-ին:

- Այո, 1918-ի դեկտեմբերին սկսվեց: Դեկտեմբերի 14-ին սուլթանը հրովարտակ արձակեց, որով դատական հետապնդումներ սկսվեցին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայկական ջարդերի պատասխանատուների նկատմամբ: Այս հրովարտակի հիման վրա կազմվեց պատերազմական ատյանը, որի փաստերով ստեղծվեց մարտի ութի լայնածավալ ամբաստանագիրը: Այստեղ կցանկանամ նշել, որ ի տարբերություն անգլիական-ամերիկյան դատական համակարգի, թուրքական դատական համակարգը հիմնված էր ֆրանսիական սիստեմի վրա, ուր ամբաստանյալը իրավունք



չունի հետազոտելու դատարանի ձեռքին գտնվող փաստերը: Ֆրանսիական և թուրքական սիստեմի մեջ փաստաբանները չկարողացան մոտենալ հավաքված փաստերին, և ամբաստանագիրը լի է, մի գեղեցիկ հայերեն բառ ունենք՝ կլանիչ փաստերով:

- Փաստորեն այդ մեղադրական փաստերը բաց արխիվներում էին, և դուք կարողացաք ձեռք բերել:

- Ցեղասպանության նման լայնածավալ ոճիրի փաստերն անհետացնելը գրեթե անկարելի է, միշտ մի քանի փաստեր կմնան: Գլխավոր ջարդարար դոկտոր Նազըմը և երկրորդը՝ Բեհադին Շաքիրը, պատերազմի ավարտից մեկ ամիս առաջ փախցրեցին մեծ թվով կարևոր փաստաթղթեր: Սակայն ոճիրն այնքան մեծ էր, որ չկարողացան անհետացնել բոլոր փաստերը, մնացած փաստերը դատարանը ձեռք բերեց և դրանց հիման վրա ամբաստանագիր կազմվեց: Այնտեղ կան ջախջախիչ փաստեր, օրինակ, 1915-ի հունիսի 23-ին դոկտոր Բեհադին Շաքիրի օգնականը Խարբերդից Նիզամին հեռագիր է ուղարկել՝ ասելով, որ «Խարբերդի խեղճ հայերը ոչ միայն կտարահանվին, այլև կենթարկվին ջարդի և բնաջնջումի», այս փաստաթուղթը ևս դատարանի ձեռքն անցավ: Նմանատիպ մի քանի ջախջախիչ փաստեր ձեռք բերվեցին գլխավոր ջարդարարների հանցանքը ապացուցելու համար: Մեկ այլ փաստ ևս հիմք էր դատարանի համար, դա 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշայի պատրաստած զեկույցն էր: 1918-ի դեկտմեբերի 5-ին 3-րդ բանակի հրամանատարին դատարանը խնդրեց, որ վերջինս որպես ականատես վկայություն տա, և Վեհիբ փաշան պատրատեց 18-էջանոց վկայանություն, որը ներկայումս գտնվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվում: Ըստ զեկույցի՝ թուրք զինվորականի եզրակացությունը հետևյալն էր. «Հայկական տեղահանության և ջարդերի գլխավոր պատասխանատուն Իթթիհատ կուսակցության կենտրոնական կոմիտեն է, և այդ կոմիտեն այս ոճիրը գործել է կանխամտածված»: Պատերազմական ատյանը այս ընդարձակ տեղեկագիրը մի քանի անգամ օգտագործեց: Սակայն դատավճիռն ամբողջությամբ հիմնված է ոչ թե վկայությունների, այլ պատերազմի ժամանակ Իթթիհատ կուսակցության և Օսմանյան կայսրության պաշտոնական փաստաթղթերի հիման վրա, սա շատ կարևոր է, քանի որ թուրքերի վարձած մի քանի ամերիկացի և եվրոպացի գիտնականներ ասում են, որ այդ դատարանը շինծու դատարան էր, թուրքերը պարտված էին: Եվ որպեսզի այս առարկության դեմ դատարանը ամուր հիմքեր ունենա, պատերազմական ատյանը հետևյալ քայլն արեց: Երկու նախարարությունների բարձրաստիճան պաշտոնյաներ՝ մեկը՝ ներքին գործոց նախարարության, մյուսը՝ արդարադատության, ամեն անգամ, որ փաստաթղթեր ձեռք էին բերում, բերում էին այս մարդկանց մոտ ստուգելու համար, արդյոք կհամապատասխանի՞ բնագրին, և այս պաշտոնյաները Իթթիհատ կուսակցության մնացորդ պաշտոնյաներն էին, որոնք տակավին պատերազմի ավարտին իրենց պաշտոնում էին, և չնայած դրան՝ մեկ առ մեկ ստուգեցին և հաստատեցին, որ դրանք բնագրերին կհամապատասխանեն: Ամեն մի փաստաթղթի վերևում և ներքևում հետևյալ մակագրությունն էր դրվում. «Սա կհամապատասխանի բնագրին»: Այնպես որ այս իրողությունը կարևոր նշանակություն կտա թուրքական պատերազմական ատյանի ամբաստանագրին և այդ դատարանի դատավճիռներին: Այսինքն՝ ամեն փաստ մակագրված էր թուրք պետության պաշտոնյաների կողմից: Իմ կարծիքով՝ թուրքական պատերազմական ատյանը ոչ միայն նախադեպն էր Նյուրնբերգի, այլև, հիմնվելով թուրքական պաշտոնական աղբյուրների վրա, անվիճելի կդարձնի Հայկական ցեղասպանության փաստարկումը:

- Առավել ևս, որ դա եղել է կազմակերպված, այլ ոչ թե ինչ-որ տեղական ուժերի գործողություններ, որովհետև այն թուրքերը, ովքեր այժմ ընդունում են Ցեղասպանության իրողությունը, շեշտում են, որ պետականորեն կազմակերպված չէր:

- Բոլոր դատավճիռների մեջ շեշետված էր, որ Իթթիհադ կուսակցության կենտրոնական կոմիտեն է այս բոլոր որոշումների հեղինակը: Եվ այս կապակցությամբ մեծ նմանություն կա Նյուրնբերգյան դատավորությանը, որտեղ հիմնականում նացիստական կուսակցությունը դատապարտվեց: Եվ այստեղ էլ թուրք պետությունում կառավարող Իթթիհադ կուսակցության ղեկավարությունը դատապարտվեց: Թուրք զորավար Վեհիբ փաշան իր ամբաստանագրի մեջ շեշտում է այս կետը, գործածելով «կանխամտածված» բառը և նշում է կուսակցության դերը այս ոճիրի կազմակերպման գործում: Իմ կարծիքով՝ Հայկական ցեղասպանությունը, կրկնում եմ, նախադեպն է Նյուրնբերգի, և որևէ առարկություն չի դիմանում, որովհետև հիմնված է թուրք բարձրաստիճան պաշտոնյաների ստուգմամբ հաստատված վավերագրերի վրա, և դրանք բոլորը համապատասխանում են բնագրերին:

- Պարոն Տատրյան, անդրադառնանք ձեր գրքին, որը նաև թուրքերեն է թարգմանվել, ինչն աննախադեպ է, քանի որ նախկինում թուրքերենով նմանածավալ աշխատություն երբեք չէր հրատարակվել:

- Ոչ միայն աննախադեպ է, այլև անհավատալի: 85 տարի շարունակ թուրք կառավարությունները ոչ միայն ուրանում էին այս ոճիրը, այլև ճնշում էին թուրքական մամուլը և թուրք հրատարակիչներին: Ես մինչև այսօր կմնամ զարմացած, թե ինչպես թուրք կառավարությունը թույլ տվեց, որ այսպիսի գիրք հրատարակվի: Իմ եզրակացությունն այն է, որ կամ տակավին չեն անդրադարձել գրքի հրատարակությանը և կամ էլ քաղաքական այնպիսի նուրբ հանգրվանի մեջ էին, որ ուզում էին անպայման Եվրոպայի աչքը մտնել և ճանաչվել իբրև արդարադատ, արդարամիտ կառավարություն, և այս պատճառով թույլ տվին գրքի հրատարակությունը: Գիրքը շանթահար հարված էր, և շատ թուրքեր՝ Անկարայի, Իզմիրի, Ստամբուլի համալսարանների ուսանողներ, ասում են. «Մեր կառավարությունը ինչպե՞ս է մեզ խաբել 85 տարի շարունակ»: Զարթոնք կա, ընդվզում կա իրենց կառավարության դեմ: Թուրքական Բիլգի համալսարանի հրատարակիչն առաջին անգամ հեռախոսով կապվեց ինձ հետ, շնորհավորեց և ասաց, որ գիրքը գրեթե սպառվելու վրա է, և կպատրաստվեն երկրորդ անգամ հրատարակել:

- Քանի՞ օրինակ է տպվել:

- Որքան կիիշեմ՝ 1500 կամ 2000, ինչը մեծ բան է ակադեմիական լուրջ գործի համար:

- Նմանատիպ նոր աշխատանքներ, հատկապես թուրքերեն լեզվով, պատրաստվո՞ւմ եք հրատարակել:

- Մի քանի ամիս առաջ թուրք հրատարակիչ Զարաքօղլուն, որ հրապարակում է այսպիսի դժվարին, խնդրահարույց գրքեր, հրապարակեց իմ 600 էջանոց գրքից թուրքերեն թարգմանություն, որի վերնագիրն է «Հայկական ցեղասպանության պատմությունը»: Որքան գիտեմ, այս գիրքն ավելի գաղտնագողի կբաշխվի, որովհետև մեկը Ստամբուլից ասաց, որ ով այդ գիրքը գնի, խանութից դուրս կպահի: Ես կրկին զարմացա, որ թուրքական ոճիրների մերկացումը փաստող հատորը հրատարակվել և վաճառվում է Ստամբուլում: Բացի այդ, նույն հրատարակչությունը 6 տարի առաջ հրատարակեց իմ ուրիշ մեկ գործը, որն անգլերեն տպագրել էր ամերիկյան աշխարհահռչակ Եյլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Կոչվում է «Հայկական ցեղասպանությունը՝ ըստ միջազգային քրեական օրենքի», լայնածավալ ուսումնասիրություն է, 120 էջանոց: Համալսարանում ասացին, որ մենք այս իրավաբանական հանդեսը կիրատարակենք 25 տարի, և առաջին անգամ այսքան պահանջ կա, կկազմակերպենք երկրորդ և երրորդ հրատարակությունը: Բոլոր՝ ամերիկյան, անգլիական, կանադական համալսարանների իրավաբանական ֆակուլտետներում իմ այս գործը կկարդացվի: Այս ամենով քաջալերված՝ մի իրավաբանական կաճառ հրատարակեց երկրորդ մեկ գործս, որը կկոչվի «Հայկական և հրեական ցեղասպանությունների տարբերության վերլուծությունը» իրավաբանական տեսակետից, և սա նույնպես մեծ տարածում է գտել: «Հայկական ցեղասպանության պատմություն» գիրքը հրատարակվել է նաև հունարեն, իսպաներեն, իտալերեն, մի քանի ամիս առաջ նաև ռուսերեն՝ Երևանի մեջ: Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենությունը կաշխատի, որ Մոսկվայի մեջ ռուս հրատարակիչները վերահրատարակեն այդ 600 էջանոց գիրքը: Բացի դրանից, վերադառնալուց հետո կիրատարակեմ 2 գործ ևս, մեկը՝ թուրքական ուրացումների ընդարձակ վերլուծությունը և մերկացումը, 200 էջանոց հրատարակություն է անգլերեն լեզվով, որ մեկ ամիս անց կիրատարակվի Զորյան հիմնարկի կողմից: 1919-ին հրատարակվեց մի հատոր, ուր ապրիլի 24-ի ձերբակալվածների նկարները և կենսագրականները կան: Այս գիրքը անգլերեն թարգմանեցինք, և որովհետև միայն պատկերներ և կարճ նկարագրականներ են, ես գրեցի 120 էջանոց ներածական, բացատրելով այս հայկական ձերբակալությունների իմաստը, որը նախաքայլը եղավ ցեղասպանության: Սա կլինի մեկ-երկու ամիս հետո, այլ ծրագրեր ևս ունեմ: Երբ վերադառնամ, Թաներ Աքչամի հետ կցանկանամ երկրորդ և երրորդ հատորը հրատարակել:

- Դուք մեծ աշխատանք եք տանում Ցեղասպանության ճանաչման գործում, ունե՞ք աշակերտներ, որոնք կշարունակեն այս աշխատանքը աշխարհի տարբեր համալսարաններում և Հայաստանում:

- Սա ինձ համար խոցելի հարց է: Երկու պատճառ կա, որ իմ պատասխանը ժխտական կլինի, նախ՝ ցավով եմ ասում, այսօրվա երիտասարդության մեջ, թե՛ այստեղ թե՛ սփյուռքում, չեն գտնվիր նվիրյալներ: Այսօր համաշխարհային աղետ է, որ երիտասարդները կլանված են մեկ գաղափարով. եթե ուսումն ավարտեն՝ գործ պիտի գտնե՞ն, թե՞ ոչ, և այս առումով անտարբերություն կա Հայկական ցեղասպանության մեջ մխրճվելու հարցում: Ավստրալիայից մի երիտասարդ եկավ մեր Զորյան հիմնարկ, շատ խանդավառվեց, որոշեց իր դոկտորական թեզը ցեղասպանությանը նվիրել: Գնաց Ավստրալիա և 6 ամիս հետո ասաց՝ պիտի հրաժարվի, քանի որ ուր գործ կփնտրի, կհարցնեն, թե դոկտորականի թեզը ինչի մասին է, կպատասխանե՝ Հայոց ցեղասպանության, անմիջապես հետաքրքրությունը կպակասի, չեն հետաքրքրված: Երկրորդ պատճառը՝ ժամանակ չունեմ, այնքան ծրագրեր ունեմ, ուզում եմ մեռնելուց առաջ արագարագ արտադրել, իսկ ուսուցանելը շատ ժամանակ կխլի: Այլ պատճառն այն է, որ Ցեղասպանության ուսումնասիրություն համար լայնածաված լեզվական հմտություն է պետք, ոչ միայն հայերեն, պետք է իմանալ թուրքերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն: Իսկ երիտասարդները կամ հայերեն, կամ անգլերեն գիտեն, ոչ թուրքերեն, ոչ օսմաներեն:

- Վերջին 10 տարիների ընթացքում Ցեղասպանության ճանաչման գործընթացը մեծ թափ է ապրել, մոտ 21 երկրներ ճանաչել են Ցեղասպանությունը: Եվ այդ գործընթացին ինչպե՞ս եք դուք վերաբերվում, մանավանդ որ Հայաստանում մեծ սպասում կար, թե Բարաք Օբաման կարտասանի այդ բառը: Այժմ հիասթափություն կա: Չե՞ք կարծում, որ ավելի ճիշտ կլինի կենտրոնանալ գիտական աշխատանքների վրա:

- Հայերը հիմա կլանված են այն տպավորությամբ, որ 20-ից ավելի երկրներ ճանաչել են հայկական ցեղասպանությունները: Սա թյուրիմացություն է, քանի որ ճանաչել են ոչ թե գործադիր իշխանությունները, այլ՝ խորհրդարանները: Խորհրդարանը հեղինակություն չունի արտաքին քաղաքականության մեջ: Միայն Ֆրանսիան է, որտեղ թե՛ օրենսդիր և թե՛ գործադիր իշխանությունները ճանաչեցին, նույնիսկ Ռուսաստանը միայն խորհրդարանի մակարդակով է ճանաչել: Այնպես որ մենք մեզ չպետք է խաբենք, համընդհանուր ճանաչում չկա: Քանի դեռ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, ոչինչ չի լինի, եթե մեկը ինձ հարցնի՝ ի՞նչ եզրակացության հանգեցիր Ցեղասպանության ճանաչման խնդրի մեջ խորանալով, ապա պիտի ասեմ, որ մեկ գործոն կա, որ որոշիչ է՝ ուժը և հզորությունը: Թուրքիան, երբ տկար էր, 1918-20-ին խոստովանություններ արեց, սակայն երբ քեմալիզմը նվաճումներ արձանագրեց և պարտության մատնեց թե՛ Հայաստանին և թե՛ Հունաստանին, այդ խոնարհ, խոստովանության պատրաստ թուրք ժողովուրդը մեկեն դարձավ ամբարտավան: Մեր ամբողջ հարցն այս է, որ մենք տկար պետություն ենք ի համեմատություն Թուրքիայի և երկար պիտի սպասենք, մինչև նրանք ճանաչեն: Եվ դա կլինի, եթե Թուրքիան զգալիորեն տկարանա: Այս տկարության հեռանկարը՝ եթե ներքին խռովություն լինի, և թուրքը թուրքի հետ բախվի, և քաղաքացիական պատերազմ լինի կամ ուրիշ պատճառներով հեռանա ՆԱՏՕ-ից... Սակայն ճագարի պես կաճեն, արդեն 72 միլիոն են:

- Իսկ եթե թուրք-քուրդ բախումներ լինեն: Քրդերը նույնպես արագ են աճում:

- Ամենախոցելի խնդիրը մեզ համար այն է, որ Թուրքիայում որպես արմատական, բացառիկ հեղինակություն ոչ թե թուրք պետությունն է՝ վարչապետը կամ նախագահը, այլ՝ բանակը: Թուրքական բանակը այնպես կզինվի, որ նույնիսկ Ամերիկայի մեջ պետական մարդիկ կասեն, թե ինչո՞ւ այդպես կզինվեն: Հզոր բանակ ունեն, և հարևան ոչ մի պետություն չի կարող սպառնալ: Ես շատ կմտահոգվեմ, որ եթե առիթ ստեղծվի, կներխուժեն և կնվաճեն Հայաստանը և Հունաստանը: Ես գտա մի վավերագիր, որի մասին շատ քիչ պատմաբաններ գիտեն: 1920-ին Հայաստանը նվաճող Քյազիմ Կարաբեքիրը հետագայում 1200 էջանոց գիրք հրատարակեց «Թուրքիայի անկախության պատերազմը» վերնագրով, որտեղ կա մի հեռագիր՝ թվագրված 1920-ի նոյեմբերի 8-ով, և ես կզարմանամ՝ ինչպես այդ գաղտնի հեռագիրը հրատարակեցին: Կարաբեքիրի բանակը պարտության մատնեց հայկական բանակին, և երբ Հայաստանի կառավարությունը ստիպված եղավ զինադադար կնքել, Կարաբեքիրը գաղտնի հեռագիր ստացավ Անկարայից, որտեղ ասված էր. «Կուզենք ձեզի հայտնել, որ Թուրքիան 2 հավերժ թշնամի ունի՝ արևելքում Հայաստանն է, իսկ արևմուտքում՝ Հունաստանը, և երբեք հնարավոր չէ ակընկալել, որ մենք այս երկու ազգերի հետ կարող ենք հաշտ ապրիլ, հետևաբար ձեզի կիրահանգենք, որպես գլխավոր նպատակ, ընդունեք հետևյալ հրամանը, Հայաստանը քաղաքականորեն և ֆիզիկապես պետք է աշխարհի երեսից վերանա, բայց որպեսզի այս ծրագիրը իրագործվի, դուք պետք է (խաբեպատիր) դիրք բռնեք Հայաստանի կառավարության հանդեպ»: Աշխարհի մեջ սա բացառիկ բան է, երբ պաշտոնական Անկարայի կառավարության արտգործնախարարը բացահայտորեն ասում է՝ խաբեք պարտված հայերին, «մեր գլխավոր եղբայրները ազերիներն են,

➲27



Անահիտ Ղազարյան

Երբ նվիրումը էություն է, իսկ աշխատանքը մասնագիտություն՝ ողջ կյանքի համար



Վանաձորի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 դպրոցում Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կտակին հավատարիմ ուխտավոր, արարող մի ուսուցիչ է աշխատում: Մանուկների շուրթերն ընկեր Ղազարյան են նրան անվանում: Իրոք, նա ընկերն է իրեն աշակերտող մանուկների, սիրեցյալ դուստրը նրանց ծնողների ու տատիկ պապիկների, որոնք իրենց ունեցած ամենամեծարժեք գանձի արժևորումը, մշակումն ու պահպանությունը վստահել են նրան՝ դասվար Անահիտ Ղազարյանին:

Նա որդեգրել է միայն մեկ դավանանք՝ լինել ազնիվ, համբերատար, արդարամիտ միշտ և ամենուր:

Առաջնորդվելով միայն ու միայն այս սկզբունքով ու երբեք չդավաճանելով ինքն իրեն՝ արդեն երեք տասնամյակ է Ուսուցիչը անխոնջ իրեն նվիրել է դպրոցին՝ կրթելով ու դաստիարակելով սերունդներ:

Եվ վերջապես արժանի խոսուն վաստակ, որ գնահատանքի է արժանի /ճանաչվել է 2000-2001 ուսումնական տարվա Վանաձոր քաղաքի «տարվա լավագույն դասվար»/, իսկ այդ վաստակը նրա երկարամյա աշխատանքի խտացումն է, ապրածի, նվիրումի շնորհիվ ձեռքբերումների ամբողջությունը: Բնույթով, էությամբ ու խառնվածքով սիրագորով ուսուցիչ է, բազում մանկավարժական ձեռնարկումների ու տարբեր միջոցառումների հեղինակ, լավատեսությամբ լեցուն, շնորհիվ որի իր շուրջն ստեղծած բարյացակամության մթնոլորտում կրթվում ու դաստիարակվում են մեր երեխաները:

Ասում են՝ սերը երեխաներին հասցնելու հիմնական մայրուղին անցնում է սրտով, Անահիտ Ղազարյանը քայլում է այդ մայրուղով: Այդ սիրով երեխաների սրտերում բացում է լույսը, գեղեցիկը, նրանցով շաղախվելու, հունցվելու անհրաժեշտությունը:

Նրա տված լույսով ու գեղեցիկով է շաղախվել նաև իմ թոռնիկը՝ Համլետ Հովհաննիսյանը՝ ուսանելով տիկին Անահիտի մոտ:

Նրա շնորհիվ է, որ մեր երեխաների մոտ, մեզանից աննկատ ձևավորվում է մարդկային որակների մի ամբողջ բույլ, որը հետագայում ավելի շատ մեր՝ ծնողներիս հպարտությունն է դառնում:

Մեզանից յուրաքանչյուրը նրա «դատին» է հանձնում իր «միակին» և արդյո՞ք զգում է այն ծանրությունը, որ կրում է նա՝ յուրաքանչյուրին վերաբերվելով որպես առանձին անհատականություն, փնտրելով ու գտնելով յուրաքանչյուրի «սրտի բանալին»:

Չգիտես ինչու՝ մարդուն գնահատելու ու երախտապարտ լինելու համար հաճախ առիթներ ենք փնտրում: Անահիտ Ղազարյանը իր անցած ճանապարհով մշտական գնահատանքի է արժանի:

Սվետլանա ՄԱԿԱՐՅԱՆ

➲26

մեր գլխավոր նպատակն է վերացնել Հայաստանը և օգնել Ադրբեջանին»: Այդ նույն օրը՝ 1920-ի նոյեմբերի 8-ին, Անկարայի արտգործնախարարը հեռագիր կուղարկե Հայաստանի կառավարությանը և կհայտարարե, թե պատրաստ են օգնել Հայաստանի սոված ժողովրդին: Նախարարը մեկ օրվա մեջ երկու հակադիր նամակներ կուղարկե, կեղծավորության, խաբեբայության այս փաստերը մինչ օրս չեն վերլուծվել:

Երբ հանդիպեցի Հայաստանի նախագահների հետ, անդրադարձա այս հարցին և ասացի՝ դուք՝ կովկասահայերդ, փորձառություն չունեք թուրքերի հետ, թուրքահայերին մի քիչ լսեք: Այն ժամանակ էլ Հայաստանի Հանրապետությունում հայ ժողովրդի հիմնական քաղաքական դերակատարները կովկասահայերն էին, այնքան միամիտ: 1911-12-ին Բուլղարիայից զորավար Անդրանիկը գաղտնի Ստամբուլ եկավ և ասաց Դաշնակցության ղեկավարությանը, թե «այս ի՞նչ կանեք, սրանք մեր մուխը կմարեն», և Ակնունին Թալեաթի հետ պիտի բանակցեր և այնքան մտերմացավ վերջինիս հետ, որ ասում էր, թե սրանք նոր թուրքեր են, եվրոպացի մարդիկ են, ջենտլմեն են: Միակ մարդը Դաշնակցության մեջ, ով կհասկնար թուրքերին և հեռացավ կուսակցությունից, Շահան Նաթալին էր:

Եվ այսօր վարչապատ Էրդողանի այս դիմափոխությունը, մեկ՝ առանց պայմանի և հետո՝ պայմանով, ամեն ինչ բանակի հրամանով է: Թուրքիայի կառավարությունն ամեն 10 օրը մեկ կանոնավոր խորհրդակցում է բանակի հետ, և վերջինս իր կամքն է թելադրում: Իմ կարծիքով՝ շատ զգույշ պիտի լինենք և արթուն մնանք ու կասկածամտությամբ մոտենանք թուրք դիվանագիտությանը:

Հարցազրույցը վարեց Արմեն ՄԱՆՎԵԼՅԱՆԸ

ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆ. ԼՈՒՅՍ ՈՒ ԽԱՎԱՐ ՓՆՏՐԵԼԻՍ

«Հայրենալքությունը սեփական «ես»-ի կործանման ճանապարհ է: Ու վերադարձ չկա»:

(պատառիկներ լրագրող ՇՈՒՇԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ «Օտարություն. լույս ու խավար փնտրելիս» անավարտ օրագրից)

Հերոսների անունները փոխված են, պատմությունների հիմքում իրական դրվագներ են:

Աննան Լևոնից նամակ ստացավ: Խմբագիր ընկերը պատվիրանապահ համբերությամբ հիշեցնում էր լրագրողի իր պարտքը ամսագրի առաջ: Էլեկտրոնային փոստով հոսող հարթ, անկյանք գիրը հույզն ու ապրումը չէր փոխանցում: Եվ Աննան պատասխանը ձևակերպեց իր չսիրած լրատվական թերատ լեզվով: Ահա քանի տարի խմբագիր ընկերը հորդորում էր գրել օտարության մշուշներում հեռվի բախտ փնտրող մեր թափառական անտունիների, նրանց անդառնալի ուղևորության, լքումի ու մոլորության մասին: Երկիրը չէր կարողացել հայրականորեն տիրություն անել իր զավակներին, ու նրանք, տկլոր ու պարտված, հայտնվել էին արևմուտքի բաց երկնքի տակ՝ անպատրաստ, անիրավունք, անտեր ու հալածական: Շատերին էր ճանաչում Աննան, գիտեր շատերի ոդիսականը, ոմանց հետ լաց էր եղել, արդարացումի խոսքեր փնտրել: Սակայն զուր: Ինքը պատրաստի պատասխան, բուժելի դեղատոմս չուներ այդ ցավի դեմ: Ոգեղեն հայրենասիրությունը վաղուց այլևս ջլատված արժեք էր, իսկ Աննան ուրիշ դեղատոմս չուներ: Նրանց զավակներին տաքություն ու հաց էր հարկավոր, ինչի մասին փույթ չէր տարել հարազատ երկիրը: Հարազատ երկիրը շուրջը նայելու ժամանակ չուներ, զբաղված էր թագավորների աղմուկով ու քաղցած ատելությամբ վատնում էր երազով հուսացած փառքը: Իսկ բազում լուսեղեն զոհեր տված երկրի հաստատուն բնակիչներին, մոլեգին վատնումի այդ լիասպառ վազքում, գոյադուլ էր հայտարարված. նրանք, աղքատ ու տնանկ, դեն էին նետվել որպես անհող քոծեր և ուխտադրույժորեն մոռացվել:

Ու հողմակոծ շան պես, վայրենացած սրտով, անդեկ, ցաքուցրիվ ու անգաղափար, աչքերում պարտություն ու ամոթ, բզկտված ու անբուրդ, աշխաիով մեկ, այսպես քարշ է գալիս մեր պատմության քոսոտ գայլը...

***

Երկրից փախչելու շատերի ոդիսականը հայտնի էր Աննային:

Սակայն իր ասելիքի տեղը չէր: Սիրտը դատարկ էր:

Սիրտը լքել էր իրեն: Օտարության խորշակաբեր քամին Աննային էլ չէր խնայել: Լրագրողի առաջվա կորովն ու ըմբոստությունը չկար: Այն, ինչ ձեռք էր բերել տարիների հրաժարումով, իսպառ կորցրել էր արևմուտքի այս մահացու վազքում, մտքում անընդհատ չէր գրում, ինչպես դա լինում էր նախկինում: Տարիներով դիմադրել էր, ընդվզել, փորձել էր սանձել հոգում գալարվող վարանումի անսանձ մրրիկը, տեղապտույտը, նահանջը: Արևմուտքում հայտնվելու առաջին տարիներին Աննան վիթխարի ներուժ, չվատնած եռանդ, ժայթքելու պատրաստ հորձանք էր զգացել: Դրսում աշխատանք գտած ամուսինը Աննայի համար էլ գործ փնտրելու հուսահատ փորձեր էր արել, արժան ու անարժան մարդկանց դիմել:

Սակայն զուր: Աննայի ընդունակությունն ու նվիրումը ոչ մեկին պետք չէր: Ու փակվեց, ներանձնացավ: Հոժարակամ հանձնվեց: Ինքն էր ու ընտանիքը, զավակները: Հանգիստ էր, ներամփոփ ու դատարկ: Ներսը անկշռելիության վիճակ էր, անօդ տարածություն, միջանցիկ քամի: Այստեղի թեմաները իրենը չէին, նյութը դիմադրում էր, չկար ՍԵՐԸ, հերոսների բախտով ապրելու անանձնական թախիծը, ինչպես լինում էր Հայրենիքում: Ժամանակին չէր յուրացրել չեզոք լրագրողի խոհեմ դասը: Այստեղ ընդունելի չէր անկեղծ կարծիք ունենալը, և այն մարդկայնորեն արտահայտելը: Ամուսինն այդ առիթով շատ դիտողություններ արեց, ինքը փորձում էր մտնել այդ նոր կաղապարի մեջ, նոր վիճակը նոր պահվածք էր թելադրում: Չէր ստացվում: Անկեղծության ու պարզասրտության համար ի՜նչ գին վճարեց, որքան տանջվեց ու արտասուք թափեց: Որքան անարժան մարդիկ հաց վերցրին իր սեղանից ու չարամտորեն ուրացան: «Հացն ինչ է, հացից էժան բա՞ն»: Ասողը հորն ու Հայրենիքն ուրացած մի մուրացիկ: Աննան այդպես էլ չընտելացավ նոր կյանքին, մնաց Երկրում, իր բաժին աշխարհի ու հերոսների հետ, ու շարունակում էր սիրել նրանց այս հեռուներից, ապրել ամեն մեկի բախտով առանձին:

Սակայն պարտատուի բեռն ուսերին էր: Աննայի ողջ նեղանձուկ հոգևարքը չգրելու կարոտից էր, ու Լևոնի նամակը հույսի ու արթնության կոչնակ էր: «Ուրեմն ընկերները դեռ հավատում են ինձ, իմ ուժերին», - բառը բառին շարեց Աննան ու սիրտը թեթևացավ: Հայրենի բարբառի սրբագործված ելևէջները, որ երբեմ պայծառ վայելչությամբ ղողանջում էին իր մեջ, բեկված լեզվակով զանգ լինեին ասես, ու հիմա, Աննան թույլ ու վախվորած, փորձ էր անում խազ առ խազ հավաքել նրա ոսկյա հանդերձներն ու վերստին բախել գոցված տաճարի դռները...

***

«Սոնան գնաց Լոս՝ աշխատանք փնտրելու»: Լևոնի նամակն էր տեղեկացնում: Աննայի սիրտը ճմլվեց. վերջին հայն էլ քոչեց, անցավ մտքով: Սոնան մեր խմբագրության նյութերը շարողն էր, մեր ոգին ու աստվածը, ուղնուծուծով երևանցի էր, Երևանին սիրահարված, Երևանով հպարտ, նշանավոր երևանցիների սիրելին: Սոնան վերջին տասը տարում մի փոքրիկ անկյուն ունենալու ապարդյուն հույս էր փայփայում: Նրանից հետո աշխատանքի ընդունվող անձերը բոլորը բնակարան ստացան: Սոնան բոլորին զիջեց իր հերթը ու ինքը մնաց անտուն: Մինիստր ու վարչապետ ընկերները, որոնք ժամանակին անփող ու անաշխատանք թափառում էին նրա շուրջ իրենց նյութերը անվարձ մեքենագրելու թախանձով, խոստացան օգնել, բայց շուտով անհետացան: Ամսագրի հոբելյանի օրն էր, բոլորը գինովցած էին: «Քո նման պուճուր տուն կտանք, կապրես», - վստահեցրել էր թանկ ու մոնումենտալ կեցվածքով, ամսագրի հեղինակ, արձակագիր, սիգաքայլ Գրող Քաղաքապետը: Ամսագրի նախկին աշխատակից Ռազմական Նախարարն էլ էր այնտեղ: Խոստացել էր ու հորդորել քաղաքապետին, հենց վաղն իսկ լուծել հարցը: Բայց...Ղարաբաղի հարց կար, բան կար, ցուրտ ու մութը... Մոռացան:

***

Սոնան Լոսից զանգեց Աննային: Ասաց՝ վերադառնում է Հայրենիք: Բավական է քարշ գա օտարության մեջ: Աննան ասաց՝ ինքն էլ է գալու: «Ո՞ւմ ես ձայնդ տալու, ախչի», ասաց Սոնան, - գործող Նախագահին չընտրես, նա սպանեց մեր ընկերոջը»: Նկատի ուներ վարչապետին: Լոսում աշխատած փողերով Սոնան արդեն բնակարան էր գնել Երևանում ու շատ ուրախ էր վերադարձի համար: Տա Աստված, որ մեր ղարիբները բոլորը մի օր էդպես տուն վերադառնան, մտածեց Աննան:

***

Աննայի ամուսինը Պրահայի օդանավակայանում դիմավորել է երևանցի իր գործընկերուհուն՝ Թբիլիսի-Պրահա չվերթից: Ինքնաթիռի մեջ լիքը հայեր: Ընտանիքներով, գերդաստանով, գալիս են Չեխիա աշխատելու: Երևանում հայերը նրանցից խոշոր գումար են վերցրել ու խոստացել են Չեխիայում աշխատանք դասավորել: Պարզվել է՝ մի մասին խաբել են ու վիզաները կեղծ են: Ընտանիքի կեսն անցել է անձնագրային անցակետը, մյուս կեսին պահել են, վիզա են ուզում: Ու մինչ նրանց դիմավորող հայ ելուզակը, կեղծ ադիդասի սպորտային հագուստով, չստերով, օդակայանի սրահից «սոտովի»-ով, իր սարսափելի չեխերենով իբր զանգում է Չեխիայում ինչ որ պատասխանատուի, խնդրելով օգնել, միջամտել, չեխ սահմանապահները նույն ինքնաթիռով ետ են ուղարկել կեղծ փաստաթղթեր ունեցող հայերին: Ստացվել է այնպես, որ հայրը մի երեխայի հետ մնացել է Չեխիայի օդակայանում, իսկ մորն ու մյուս երեխային ուղարկել են ետ: Կամ հակառակը: Էսպես, ինքնաթիռի կեսից ավելին:

***

Աննան Ռուբենին գտավ Համբուրգի սրճարաններից մեկում: Արդեն ուշ էր, սրճարանը փակվում էր ու Ռուբենը հատակն էր լվանում: Ռուբենի պատմությունը հուզել էր Աննային, երկար փնտրել էր նրան, գտնելուց հետո երկար համոզել, որ հանդիպեն, խոսեն այդ մասին: Ռուբենը սկզբում մերժել էր, չեմ ուզում հիշել անցյալը, ասել էր, բայց հետո դժվարությամբ համաձայնել:

«Երբ ինձ հրավիրեցին այդ հիմնարկում աշխատելու, գործն ավարտելուց հետո, ծխախոտ կպցնելով, իր պատմությունը սկսեց Ռուբենը, ինձ աշխարհի ամենաբախտավոր մարդը համարեցի: «Ետխորհրդային երկրներին տնտեսական աջակցության գերմանական բանկն» էր, որը բիզնես-ծրագրեր էր կազմում նախկին սոցիալիստական պետությունների համար և ապահովում էր դրանց վարկավորումը: Այստեղ գերմանացիների հրավերով աշխատում էին երկրագնդի տարբեր ծագերից հրավիրված ծառայողներ, այդ թվում հայեր. բանկն ուներ նաև իր երևանյան փոքրիկ մասնաճյուղը: Տեղ հասա և ուրախությունս երկար չտևեց: Գերմանիա կոչվող այս չքնաղ երկրում, աշխատանքով ու ծով ապրուստով ապահով, հայերը թշնամի ճամբարների բաժանված, այլ հարցեր էին լուծում: Իրար դեմ, իրար կոկորդ կրծելով, իրար ոչնչացնելով, այն դեպքում, երբ Հայաստանում մեզնից շատ ավելի արժանի մասնագետներ զրկված էին ապրելու ու աշխատելու տարրական պայմաններից: Աշխատանքային առաջին օրը, ինձ գարեջուր խմելու հրավիրած մեծամասնության դաշինքը մոտիկ չթողեց հարևան սեղանի մոտ, միայնակ ու գլխիկոր նստած մեր գործընկերոջը, որի հետ նույն սենյակում էին տեղավորել ինձ: Գործընկերս Հայաստանում շատ հայտնի Ակադեմիկոսի զավակ էր, ֆիզիկոս, 1989-ին անսպասելի լքել էր Հայրենիքն ու հայտնվել ԱՄՆ-ում: Անչափ խելացի, կրթված մի անձնավորություն, որի հետ առաջին իսկ շփումից անհնար էր չգնահատել նրա մտավոր կարողությունները: Նյու Յորքում արժանի աշխատանք չէր գտել, այլ ելք չունենալով, համաձայնել էր ինչ որ հյուրանոցի դռնապանի պաշտոնին: Եվ ահա, բախտն հանկարծ ժպտացել էր, երբ գերմանական բանկի Նյու Յորքի մասնաճյուղի սփյուռքահայ աշխատակիցը մի բարեգործական հավաքույթում պատահական ծանոթացել էր նրա հետ ու ընկերացել, այնուհետև հրավիրել էր աշխատելու, փրկելով նրան նվաստացուցիչ ծառայությունից: Այս ամենն ինքն է պատմել ինձ, հետն էլ հազար անգամ փառք տվել ծանր պահին իրեն ձեռք մեկնած անծանոթ Բարերարին: Բայց պարզվեց, որ Գերմանիայում, բանկի հայ աշխատակիցները խորապես ատում էին Բարերարին: Ինչ որ անհասկանալի անձնական հին հաշիվներ ունեին նրա հետ: Ու բնականաբար, նրա միջնորդությամբ աշխատանքի ընդունված ֆիզիկոսին նույնպես: Բայց ինձ ինչ, ես չէի ուզում խառնվել այդ հարաբերություններին: Ու որպես համերաշխության նշան, գարեջրատանը մոտեցա, նստեցի գործընկերոջս կողքին, այնուհետև հրավիրեցի մեր սեղանի մոտ: Ամեն կերպ ուզում էի ընգծել, որ բնույթով «պարզ էրևանցի տղա եմ»: Հակառակորդ մեծամասնությունն ինձ դա չներեց: Սկսվեցին հալածանքները մեր երկուսի դեմ: Ամեն անցնող օր լի էր կարիճի սև թույնով, աշխատելը դարձել էր անտանելի: Բայց քանի որ գործընկերս ինձ հետ էր, իմ կողքին, միասին ավելի հեշտ էր դիմակայել: Ավաղ, սխալվեցի: Այդ օրերին մեր ծառայության պետը թոշակի էր անցնում, շշուկներ էին հասել, որ բանկի ղեկավարությունը մեր բաժնի տնօրեն է նշանակում հենց գործընկերոջս Բարերարին՝ Նյու Յորքի գրասենյակից: Մեր երկուսի ուրախությանը չափ չկար, այդ առիթով քանի՜ գավաթ գարեջուր ենք խմել Համբուրգի «Ֆրանսիական այգի» կոչվող բացօթյա աշխարհահռչակ գարեջրատանը: Այդ օրերին Բարերարը, մինչև իր Գերմանիա գալն ու նոր պաշտոնը ստանձնելը, ապահովության համար, իր ընկեր Ֆիզիկոսին նշանակեց բաժնում իրեն փոխարինող: Վերջապես կհանգստանանք, կանցնենք նորմալ աշխատանքի, մտածեցի: Ավաղ…Ուրախությունս կարճ տևեց: Նույն գիշեր, Ֆիզիկոս գործընկերս խախտեց ամեն երդում ու պայման, միացավ հակառակորդ թիմին, որը նրան խոստացել էր ղեկավարի աթոռը ու նրանց հետ սկսեց պայքարել իր Բարերար ընկերոջ դեմ: Կազմակերպում էին հերյուրական նամակներ, իբր Բարերարը ահաբեկիչ է եղել, տգետ է, նրա հասցեին ամենուր հնչում էին անձնական բնույթի նողկալի բամբասանքներ: Ինձ էլ համոզեց միանալ իրենց, պայքարել Բարերարի դեմ, որին, ի դեպ, չէի էլ ճանաչում: Հորդորում էր, որ ղեկավար հաջողելու դեպքում, ինձ կնշանակի տեղակալ, իսկ կինս բանկում որևէ աշխատանք կստանա: Ես չհամոզվեցի: Ֆիզիկոսի պոռնկությունը խորապես խոցել էր ինձ, ու ես զգում էի ինձ խաբված, պղծված, կարծես թքել էին սրտիս մեջ: Նրա վարքից ինձ ամենաշատը ցնցել էր մի փաստ. Երևանում լույս տեսնող «Ժողովուրդ» օրաթերթում, նա ինքն իրեն արդեն հռչակել էր ծառայության ղեկավար, պատմել էր Հայաստանում բանկի առաջիկա ծրագրերի մասին, ու մեկ էլ լրջորեն եզրակացրել. «Հայրենիքը պետք է լինի կրծքի տակ: Սփյուռքում ծնվածը չի կարող Հայրենիքը կրծքի տակ զգալ»: Նկատի ուներ իր Բարերար ընկերոջը: Ուրեմն Հայրենիքը կրծքի տակ էլ1989-ին փախել էր, երբ Արցախյան շարժման ոգին ալեկոծել էր բոլորիս, ով գիտե ի՞նչ նողկալի հերյուրանքներ էր գրել Հայաստանի հասցեին՝ փախստականի կարգավիճակ ստանալու համար: Այդ մասին, սակայն, լռել էր թերթում: Վերջին հնարը, որ մոգոնել էր Ֆիզիկոսը, իր Բարերարի դեմ աշխատակիցներից ստորագրություն հավաքելն էր, որի տակ միայն ես չստորագրեցի: Ու դա ճակատագրական եղավ Ֆիզիկոսի համար: Նամակը որպեսզի գործուն նշանակություն ունենար, իմ ստորագրությունն էլ էր անհրաժեշտ: Ինչե՜ր քաշեց իմ ընտանիքն այդ օրերին: Բարերարն էլ արդեն ընկճվել, ուր որ է հրաժարվելու էր պաշտոնից, հազիվ համոզեցի մի քիչ էլ դիմանալ: Երկար չարչարանքներից հետո, վերջապես նա կարողացավ վիզա ստանալ, Ամերիկայից գալ Գերմանիա ու տեր կանգնել իր աշխատանքին: Բոլորին թվաց, թե նա ինձ արձան կկանգնեցնի կամ կնոջս աշխատանքի կընդունի», սառած սուրճից մի կում անելով, քմծիծաղեց Ռուբենն ու շարունակեց, - բնավ ոչ: Արձան չկառուցեց: Կինս էլ էն գլխից հրաժարվել էր Ֆիզիկոսի առաջարկներից, իմանալով դրա գինը: Ու երբ Բարերարը Նյու Յորքից Համբուրգ եկավ, ես նույնիսկ օդակայան չգնացի, դիմավորողներն արդեն շատացել էին»:

- Փաստորեն դու միայնակ հաղթել ես: Էլ ինչո՞ւ դուրս եկար աշխատանքից:

Ռուբենը մի փոքր լռեց, հետո՝ վառելով հերթական սիգարետը, դառնացած ավելացրեց.

- Բարերարը նոր պրոբլեմներ չէր ուզում, մի քանի օրում ներեց Ֆիզիկոսին, ընկերացավ նրանց հետ: Դեռ ավելին, Ֆիզիկոսի կնոջն ընդունեց աշխատանքի, հետո բարձրացրեց աշխատավարձը: Այդ մթնոլորտում ես ինձ ավելորդ զգացի»:

Ահա այսքանը: Բայց Ռուբենը չիմացավ, որ իր պատմությունը շարունակություն է ունեցել: Երևանում Աննան հանդիպել էր նաև Ֆիզիկոսի հրամանագրով աշխատանքից հեռացված տնտեսագետին, ստուգելու Ռուբենի պատմության փաստերը: Ու լսել էր հետևյալը. Ֆիզիկոսը չի հանգստացել, ամենօրյա բանսարկություններով այնքան է նստել վերադասի ականջին, որ Բարերարը հոգնած ու զզված թողել է ղեկավարի աթոռն ու հեռացել այլ աշխատանքի: Ակադեմիկոսի որդին 10 տարի անց, վերջապես տիրացել էր բաղձալի պաշտոնին: Ու այս անգամ չարության թույնը սկսել էր թափել մնացածների վրա: Սկսվել էր «մեծ զտումը»: Մի գիշերում գործից հեռացրել էր բանկի երևանյան մասնաճյուղի փորձառու պատասխանատուին, ապա համբուրգյան կենտրոնի հմուտ ֆինանսիստներից մեկին, փողոց շպրտելով նրա երկու անչափահաս աղջիկներին՝ օտարության մեջ զրկելով նրանց տանիքից, հացից և ուսումից: Իրար դեմ էր հանել ողջ բաժինը, երեկվա ընկերներին դարձրել արյան թշնամի: Նրա սարքած անհիմնալի խարդավանքներին չդիմանալով, երկու տարում աշխատանքից հեռացել էին բանկի երկարամյա 12 տնտեսագետներ և մարկետինգի գծով մասնագետներ, որոնցից մի քանիսն, ի դեպ, ժամանակին սատարել էին ֆիզիկոսին՝ Բարերար ղեկավարի դեմ վարած արշավում: Երբեմնի հարգանք ու հռչակ վայելող այդ միջազգային ֆինանսական հաստատության հայկական ծառայությունը, չկայացած Ֆիզիկոս ղեկավարի ձեռամբ, վերածվել էր որոշակի օլիգարխների շահերը սպասարկող հիմնարկի, դարձել քծնանքի, ստորության, գործի հետ կապ չունեցող, գավառական ներքինով, մանկուրտված թայֆա, որն ամեն կերպ ձգտում էր «փչացնել» բանկի երևանյան մասնաճյուղում և համբուրգյան կենտրոնակայանում տեղ ստացող ջահել շնորհալի մասնագետներին...

***

Հայրենիքից հեռանալը անամոքելի ցավ է մտավորականի համար, իսկ հեռվում խարդավանքներով զբաղվելը՝ հոգու հանգստություն, հայրենալքության ծանր խարանը ջնջելու ճանապարհին: Հայրենալքության ու փախստականի հավասարապես նվաստացուցիչ զգացումները անպայման ստորադասվում են բանական գոհաբերության վեհ գաղափարի առաջ: Ու մտավորականը դառնում է չար, անազնիվ, սեփական անձի չկայացման զոհ և ողջ կյանքը նվիրում իր կայացմանը, որն այդպես էլ չի լինելու: Քանի որ, ի վերուստ հայրենալքությունը սեփական եսի կործանման ճամփա է:

Ու վերադարձ չկա:

Բոլորիս համար...

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարդիկ շարունակում են հեռանալ Հայաստանից: Գնում են գրին քարտով ու փախստականի կարգավիճակով, սովորելու և ամուսնանալու պատրվակով, հուսահատված հային հասու այլ միջոցներով: Իշխանական այրերին էլ այս վիճակը գրեթե չի մտահոգում, քանզի արտագաղթից երբևէ չեն խոսում: Փոխարենը նրանք իրենց դհոլին են խփում, իմա՝ ճգնաժամի պայմաններում հնարավոր ամեն ինչ անում են հայաստանցիների կյանքն ու կենցաղը տանելի պայմաններում պահել-պահպանելու ուղղությամբ:

Ո՞ւմ եք փորձում ինչ-որ բան համոզել, պարոնայք: Մարդու իմ տեսակին, որ ցրտի ու մթի տարիներին հուսահատություն չի ապրել ու մեր ընդհանուր հաղթանակի մասնակիցն է դարձել, հիմա դուք պարտավոր եք ոչ թե հնարավորի հնարավորություններից խոսել, այլ շատ ավելի առարկայական գործընթացներից: Ասենք՝ երկիրը մասամբ իսկ աշխատեցնելուց, այնպես, ինչպես անում է բարոյակիրթ տնտեսվարական միտքը երկիր մոլորակի մի 100 երկրում: Դրանց հիմնական մասում ոչ պղինձ ու մոլիբդեն կա, ոչ նավթ ու գազ, և պաշտոնյաներն էլ նախարար ու պատգամավոր, խորհրդական ու պետկոմի նախագահ չեն խաղում, այլ իրենց հայրենակցին ու երկիրը հարգելու պարզ զգացումով են առաջնորդվում: Դուք ինչո՞ւ այդ զգացումով չեք աշխատում, պարոնայք, շատերիդ թերևս արժե նաև ոչ հեռավոր անցյալի ընկերների շարքին դասել: Երբ շաբաթներ առաջ ԱՄՆ-ում էի, ծանոթներից մեկն ասաց, որ երկրից վերջնականապես հուսալքվել ու հեռացել է Օղակաձև զբոսայգու հատվածներից մեկում կառուցվող հսկայական բետոնածածկ շինությունը հայ հանրության հանդեպ արհամարհանքի դրսևորում համարելու պատճառով: Օղակաձևը մեր բարոյականության խորհրդանիշներից էր. հիմա ցավով ենք արձանագրում: Գուցե դա էլ է հեռանալու հիմնավոր պատճառ, չեմ փորձի առարկել, բայց մեր մեկնողների հիմնական մասը հեռանում է ոչ այնքան իրեն հասցված բարոյական հարվածից, որքան կենցաղից ու առօրյայից բխող խնդիրների հանդեպ անզորությունից: Այստեղ է, որ դուք մեղքը քավելու տեղ ունեք, որը, ցավալիորեն չեք ցուցադրում, երբեմն ու հաճախ հակառակն եք անում, իբր՝ հանրությունը ձեզ չի օգնում, պատրաստ չէ, ցանկություն չի ցուցաբերում... Եղբայր, նախ ինքներդ փորձեք ձեր անմիջական իրավունքների ու պարտավորությունների շրջանակի հարցերն ու խնդիրները կարգավորել: Ինչպիսի՞ք. ասենք, ներմուծվող հիմնական ապրանքների գներում մասամբ տանելի վիճակ ապահովել: Տեսեք. ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հաղորդագրության, 2008 թվականին ՀՀ ներկրվել են 41 հազար տոննա միս ու մսային սննդի ենթատեսակներ, 40 մլն դոլար ընդհանուր արժեքով: Պարզ թվաբանությամբ ստացվում է 1 կգ-ը 1 դոլարից պակաս՝ 270-280 դրամ, քանզի նախորդ ողջ տարում արտարժույթի փոխարժեքը 300 դրամ էր: Քանի որ ներկրվողը հաճախ խոզի միս է, դիտարկենք այն, որը առևտրի մեր որոշ կետերում վաճառվում էր 1700 դրամով, մոտ 6 դոլարով: Որտե՞ղ է տրամաբանությունը, որը, վստահ կարելի է ասել, պարզապես չկա: Մեկ հիմնական անհեթեթ արդարացում կա կապված խոզի տեղական մսի 10 դոլարի հասնող գնի հետ: Բայց դա ինչ փաստարկ է, որ խոսում է այս ոլորտի պատասխանատուների աշխատանքի արդյունավետության, տվյալ պարագայում՝ անարդյունավետության մասին: Մի շրջան աշխատելով պետական այդ կառույցներից մեկում և հաճախակի շփվելով ոլորտի շահառուների հետ, հաճախ էի հետևյալ հարցը լսում. մի՞թե այդ նախարարությունը դեռ կա. «այդ»-ի տեղում դրեք տնտեսական ոլորտի որևէ նախարարության անվանումը և հարցի իմաստը չի փոխվի: Ահա հայաստանյան իրողությունը, գուցե պարզ, գուցե մի փոքր խտացված:

Հայ հանրության մի որոշակի հատվածի կողմից խոսքս ուղղում եմ ՀՀ կառավարությանը, անձամբ վարչապետին, տարածքների կառավարման ու գյուղատնտեսության նախարարներին. աշխարհի չորս կողմերից 1 կգ-ը հազիվ 1 դոլարով ներկրված մսատեսակները ՀՀ-ում 5-6-ապատիկ թանկ վաճառելը ի՞նչ բացատրություն ունի, արդյոք որևէ ձևով արտացոլվո՞ւմ է երկրի բյուջեում: Կոնկրետ իմ, ՀՀ քաղաքացուս կարծիքը բացասական է, քանզի մեր բյուջեն դժվար է տրամաբանական գործընթացների արդյունք որակել: Ինչո՞ւ. որովհետև 0,8 մլն բնակչությամբ Կիպրոսի բյուջեն 10 մլրդ դոլար է, 3,5 մլն բնակչությամբ Լիտվայինը՝ 14 մլրդ դոլար, 5,5 մլն բնակչությամբ Դանիայինը՝ 160 մլրդ դոլար: Այս ի՞նչ վիճակ է Հայաստանում, որ մեզնից 4 անգամ պակաս բնակչությամբ Կիպրոսի բյուջեն մերը գերազանցում է 4 անգամ, որ նախկին խորհրդային մի այլ հանրապետության ցուցանիշին զիջում ենք մի քանի անգամ, իսկ եվրոպական մի երկրի՝ գրեթե 100-ապատիկ: Այն տպավորությունն է ստեղծվում, որ Դանիայի թփերի ու ծառերի վրա ոսկի ու ադամանդ են աճում, մեզ մոտ՝ խաղող ու ծիրան, որոնք մենք դարեր շարունակ նույնացնում ենք ոսկու ու ադամանդի հետ: Բայց տարօրինակորեն հայ գյուղացին աղքատ է առավել, քան անապատի բնակիչը, անեծքով է հիշում իրեն հողատեր դարձնելու գործընթացը, ի զորու չէ մշակել, առավել ևս՝ հիմնական գյուղարտադրանք, կաթնամսամթերքներ արտադրել, որը աշխարհի գրեթե բոլոր երկրներում տնտեսության կայացման հիմնախնդիր է համարվում, պարենային ապահովության ու անվտանգության երաշխիք: Ինչո՞ւ, պարոն վարչապետ. 2-րդ գարունն է այս հարցը ձեր մի խումբ պատասխանատու ենթականերին ուղղելու հնարավորությունն ունեք, որից չեք օգտվում, չեք պահանջում որակյալի կողքին նաև հայ շարքային մարդուն մատչելի տեղական միս ու մսատեսակների արտադրություն ծավալել: Գյուղնախարարներից Դ. Լոքյանը սկսել էր այս գործը, սակայն տարօրինակորեն («կուսակցականորեն») ազատվեց, նրա հաջորդի գալն ու գնալն առեղծվածի շարունակությունն էր, ներկայիս նախարարի՞ն քանի ամսվա ղեկավարում է մնում: Եվ հարցը՝ ի՞նչ է կատարվում Հայաստանում, ինչում է ինքնաբերաբար:

Հայ մարդն այս հարցին հիմնականում իր տխուր գնահատականն է տալիս, որը հաճելի չէ բարձրագույն իշխանավորների ականջին. ամենամեղմը, դա փոքրաթիվ մեծահարուստների, դրանց թվում՝ ներմուծողների շահերի սպասարկումն է, նրանց գերշահույթների ապահովումը: Բայց ինչո՞ւ չսիրել նաև հասարակ համերկրացուն, ում զավակներն են այսօր կյանքի տարբեր ոլորտներում փառաբանում մեր երկիրը, այլոց պարտադրում բարձրացնել հայոց եռագույնն ու հնչեցնել «Մեր Հայրենիք»-ը: Չէ՞ որ մեր այդ փառապանծ ներկայացուցիչները վերադառնալով հայաստանյան իրականություն, շփվելով իրենց ընտանիքների անդամների, հարազատների ու հարևանների, ընկեր-ծանոթների հետ, գլխահակի կարգավիճակում են հայտնվում: Այս վիճակի համար մեղավոր փնտրելու անհրաժեշտություն չկա, քանզի նա հայ իշխանավորն է, լինի կատարող թե կարգադրող, վերահսկող թե պահանջող: Հանրության անունից այդ նրանց եմ ուղղում ՀՀ ԱՎԾ հաղորդագրությունից վերցրած հաջորդ փաստը: 2008-ին ՀՀ ներմուծվել է 18,6 մլն լիտր արևածաղկի ձեթ, 16 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, 1 լիտրի արժեքը ստացվում է մոտ 250 դրամ: Ինչո՞ւ խստագույնս չպատժվեցին նրանք, ովքեր այդ նույն տարում քիչ համարելով ձեթի լիտրի դիմաց 600 դրամը, համարձակվեցին կրկնապատկել. որտեղի՞ց նրանց այդ համարձակությունը, որը մեր մարդիկ այլ բառերով են կոչում՝ ամենաթողություն, հովանավորություն, սանձարձակություն... Հայաստանցին հիմա սարսափով է սպասում այն պահին, երբ կթանկանան տրանսպորտի գները, որոնց կարծեցյալ անշահութաբերության մասին հաճախ են հիշեցնում ոլորտի տերերը:

Այսօրինակ մտահոգությամբ է ապրում ՀՀ քաղաքացին, ով արծարծված կենցաղային հոգսերից շատ ավելի հեռահար խնդիրներ ունի իր առջև: Բայց չգիտես ինչու իր անհարկի հոգսաշատ դարձող յուրաքանչյուր օրվա դիմաց նա պարտադրված է ծանր գին վճարել, որի վերջնագինը երկրից հեռանալն է, հուսալքումն ու օտարացումը, լինի այլազգու թե հայի անվան տակ: Օտար երկրներում նա շատ ավելի ծանր ու երբեմն անպատվաբեր աշխատանք է կատարում, քան է՝ սեփական երկրում համեստ աշխատանքով իր համեստ կենցաղը ապահովելը, սակայն նա զրկված է այդ պարզ հնարավորությունից: Հերթական մի օրինակ նշեմ. այլևայլ ներմուծումների կողքին միայն պատրաստի սննդի արտադրանքի ներմուծումը նախորդ տարում կազմել է 256 մլն դոլար: Արդյոք արդարացվա՞ծ է այլոց պատրաստի սննդի սպառման հարցում էլ մեզ օտարամոլության մղելը, ազգայինը մոռացության տալու հաշվին: Ինչո՞ւ, ՀՀ տնտեսության պատասխանատու պարոնայք տնտեսվարներ. ի վերջո ի՞նչ է կատարվում ձեր ղեկավարած երկրում, որը շարքային հայն արդեն դժվարանում է նաև իրենը համարել:

Գեղամ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

«Թերեւ ցավերը խոսուն են, բայց խորը ցավերը համր են»:
ՍԵՆԵԿԱ

Կենդանական աշխարհում մարդ արարածին մնացածներից տարբերող բանականությունից բացի, ամենակարեւորը հատկանիշը հիշողությունն է: Ես ես եմ: Նման սփյուռքահայերից իրենց ազգային պատկանելությունը պահպանած բոլոր մարդիկ հենց այդ հիշողության շնորհիվ է, որ հայ են մնացել: Եթե չլիներ այդ հիշողությունը, օրինակ ես ինչ իմ ով լինելը կիմանայի, ինչ էլ` Հայաստանի տեղը երկիր մոլորակի վրա, չնայած նախախնամության հրաշագործության շնորհիվ անձամբ հայկական Կիլիկիայում եմ ծնվել, երբեմնի հայոց թագավորության գեղատեսիլ Ալեքսանդրետի ծոցում:

Մարդկային հիշողության աներեւույթ ուժը իրենն արել է երիտասարդ տարիքիս ինձ իմ պատմական հայրենիքի արեւելյան մի փոքր հատվածում ծվարած պետության ափերը հասցնելու հարցում: Բախտ եմ ունեցել ականատես մասնակիցը լինել իմ հայրենի պետության վերածնունդին եւ անկախության, բայց ամենակարեւորը` իմ հողի վրա կաթիլ առ կաթիլ քրտինք ու արյուն եմ եմ կաթացրել, որպեսզի իմ երկիրը հավերժ պաշտպանունակ լինի: Այո... հպարտ եմ, որ եղել եմ այն հազարավոր նվիրյալների համեստ շարքերում` իբրեւ սփյուռքահայ կամավոր, ու փաստել, որ նույն հայրենիքի սիրույն, որտեղից էլ լինի, հայորդիի միջեւ ոչ մի տարբերություն չկա, մտածողներն են ապազա կերտում:

Ես իմ հիշողության շնորհիվ եմ ինձնից բռնի զավթածից մի ոտնաչափ փոքր հողակտորի պաշտպանությունն ապահովելով մշտական բույն դրել, ընտանիք կազմել, երեխաներ ունեցել: Այդ իսկ պատճառով էլ` հպարտ քայլել եմ այս` ինձ էլ պատկանող հողի վրա, ունեցել մտերիմներ, հարեւաններ, սովորական մահկանացու իմ համեստ կյանքով ապրել... մինչեւ ձերբակալվելս անարդարաբար:

Բանտում անցկացրած իմ յուրաքանչյուր օրը եւս հիշում եմ, քանի որ մարդ արարած եմ եւ անաասունից տարբերվում եմ իմ այդ հատկանիշի շնորհիվ ու ինչքան ուժս պատում է, փորձում եմ իմ մարդ տեսակին անդավաճան էլ մնալ: Ինձ այս տառապանքին ենթարկել փորձողները, սակայն, չեն կարողանում իրենց կոչմանն արժանավայել լինել եւ շատ իզուր իջնում են մարդու համար նախատեսված նշաձողից շատ ներքեւ ու այս անելով` իրենց հետնորդ սերունդների գիտակցության համար շատ ծանր հիշողություններ թողնում:

Ես ցավում եմ նրանց որդիների համար, քանի որ արդար չէ այդ անմեղներին նման ծանր բեռի տակ դնելը, եւ ցանկանում, որ նրանք չարժանանան դաժիճի անտանելի հիշողության ժառանգության: Ով`ով, ես գիտեմ` ինչ է նշանակում հշողություն, պանդխտություն, անտնություն, անտերություն, ու թեկուզ թշնամուս նույնը չեմ ցանկանում:

Հանգամանքների բերումով այսօր գոյություն ունեցող հայոց զույգ պետությունների պաշտպանության համակարգերի ստեղծման ակունքներում լինելու պատիվս եմ ունեցել եւ այդ տարիներն իմ կյանքի լավագույն տարիներն եմ գնահատում: Պատերազմի տարիներից իմ հիշողություններն ամբողջովին եւ միշտ կենդանի են, հավանաբար այն պարզ ճշմարտության լույսի ներքո, որ «պատերազմից ետ չեն վերադառնում»: Այո, սա սինդրոմ է, բայց փաստ հիրավի, որը միայն դրանով տառապողները գիտեն բնականաբար:

Այժմ ՀՀ Պնախարար հանդիսացող Սեյրան Օհանյանը ինձ ճանաչում է Արցախից, նույն ինքը` ԼՂՀ ՊԲ կազմում իմ գտնված Մարտակերտի շրջանի Չլդրան, Դրմբոն, Կուսապատ, Մաղաուզ, Մատաղիս եւ Լեւոնարխ գյուղերի ինքնապաշտպանության կամ էլ ազատագրման համար մղված մարտերի ընթացքում մեր շտաբի սպան լինելու հանգամանքով: Սա նշանակում է, որ նա եւս հիշողություն ունի եւ միայն իրեն պատկանող այդ հիշողություններով էլ ապրում է, եթե, անշուշտ, այդ առթիվ իր մոտ որեւէ խնդիր կամ մթագնում չկա:

2009-ի հունիսի 19-ից հայտարարված համաներումը առիթ հանդիսացավ, որ ես հասկանայի, որ իմ երկրի Պնախարարի մոտ հիշողության լուրջ խնդիրներ կան, որովհետեւ թե ինքը եւ թե Արցախում իր թողած աթոռն այժմ զբաղեցնող ԼՂՀ Պնախարար Մովսես Հակոբյանն այդ օրվանից քափուքրտինք թափելով հանդերձ, ինձ իրենց տնօրինած արխիվներում «ման են գալիս» բայց «չեն գտնում»:

Ա՞յ քեզ բան... կմտածեք ու կասեք վստահաբար, ես կզարմանայի հավանաբար եղելության վրա, սակայն պետք է գիտակցել, որ 1937-ը հիշեցնող մեր օրերի պայմաններում տեղի ունեցածը այդքան էլ զարմանալի չէ: Այսօր մեր սերունդը ինչն, ինչքանով գիտի 1937 թվականի մասին, գալիք սերունդներն էլ ճիշտ այդքանն են իմանալու մեր այս ժամանակների մասին: Եթե ասածներս ձեզ մոտ հավատ չեն ներշնչում, ուզում եմ միայն մեկ օրինակով ձեզ համոզել:

1937-ի զոհերից ազգիս մեծագույն կորուստ` Եղիշե Չարենցի գլուխը կտրել գցել են, եւ արխիվային նյութերում բանաստեղծի գլխին վերաբերող ոչ մեկ տվյալ չկա: Սակայն արխիվային տվյալները ի՞նչ էլ ասեն կամ չասեն, բոլորս էլ գիտենք չէ՞, որ նա գլուխ եւ գլխում էլ սքանչելի ուղեղ է ունեցել: Մենք Չարենցով ապրում ենք, մտածում, հուզվում, ուրախանում, տխրում, այսինքն` նա մեր հիշողության անբաժան մասն է վաղուց եւ հավերժ այդպես էլ մնալու է` վստահ եմ:

Իսկ մեզանից ո՞վ գիտի իր գլուխը կտրող թափողի ինքնությունը, եւ նա ոչ մեկիս հիշողության մաս էլ չի կազմելու երբեք, իր արած ստոր արարքի անհիշողությանանընդհատության պատճառով, չնայած իր մասին «արխիֆներում» լավ էլ բավականին հարուստ տեղեկություններ կան:

Ես այժմ այս տողերը գրածս «Վարդաշենի» բանտախցում փորձում եմ իմ մարդկային հիշողության իրավունքը պաշտպանել: Հիշողությունն իմ անձեռնմխելի է, եւ ես այն ոչ մեկի «արխիվում» չեմ տեղավորել, որ հիմա էլ ինչ-որ մեկից այդ մասին «տեղեկանք» մուրալու օրն ընկնեմ:

Մարդը անասունից իր հիշողությամբ է տարբերվում, եւ ես ուրախ եմ, որ հիշելու իմ մարդկային ընդունակությունը բարեբախտաբար չեմ կորցրել: Իսկ եթե ուզում եք իմանալ, թե այս ամենը ում եմ ասում, ճիշտն ասած, արդեն շփոթվել եմ, կներեք, բայց այնուամենայնիվ, մարդկանց եմ փնտրում: Հեյ... ո՞վ կա այդտեղ:

Յ.Գ. Կարելի է եւ անհամեստություն հնչի Ե. Չարենցի եւ 1937-ի «արխիվային» նյութերի առթիվ իմ հոդվածում արված համեմատությունը, սակայն ուզում եմ, այնուամենայնիվ, զարգացնել այն: Չարենցի ոչ միայն կտրված-գցված գլուխը, այլեւ իր դիակն ու շպրտված անկյունն իսկ մեզ անհայտ է: Սակայն ինչ նշանակություն ունի նրա ֆիզիկականը, եթե չկա հայի տուն, ուր Չարենց չլինի, չկա հայ երեխա, որ Չարենց չարտասանի, չկա հայ ազգ ու հայություն առանց Չարենցի: Սա ապացույցն է այն բանի, որ մարդու գործն է անմահ եւ հավերժ: Ես արցախյան ազատամարտի տարիներին իմ համեստ գոյությամբ թեկուզ եւ կես մետր քառակուսի հող պաշտպանելով` այսօր այդ հողում ապրող մեկ հայրենակցին խաղաղ երկնքի տակ կյանք արարելու բոլոր պահերին կամ, առկա եմ եւ հենց դրա գիտակցումով էլ, ինձ վիրավորող փորձողների տմարդությունը արհամարհում եմ: Նրանք իրենց թոռներին ամեն անգամ երբ ինչ-որ բան պատմել ուզենան, վստահ գիտեմ, որ ես գալու եմ իրենց աչքի առաջ, ու սեփական հիշողությանը դավաճանելու քստմնելի արարքը թույլ տվողների ձայնը դուրս չի գալու, իրենց խեղդող չորացած կոկորդից... չկասկածեք:

Սարգիս ՅԱՑՊԱՆՅԱՆ

Կանխատեսումներ. ի՞նչ է ձեզ սպասում

2020թ.

Ազգային սահմանները կջնջվեն ոչ միայն քարտեզներից, այլև մարդկային հիշողությունից: Մշակութային տարբերությունները դեռևս կմնան, բայց գերտերություններ կլինեն տնտեսության ու քաղաքականության վրա վիթխարի ազդեցություն ունեցող տրանսազգային մի քանի կորպորացիաներ: Դրանցում կիշխի ընկերության խստագույն կուլտը` բարձրագույն մենեջմենթին աշխատակիցների լիակատար ենթարկումը: Անձնական կյանքը կարիերայից անբաժան կլինի, իսկ մարդիկ, առաջին հերթին, կլինեն իրենց կորպորացիայի մասը: «Ով է ինքը» հարցին մարդը կտա մոտավորապես նման մի պատասխան. «Աշխատում եմ Shell-ի համար, հոլանդացի եմ (անգլիացի, ռուս, ֆրանսիացի,...):

Դ. վան Շլյուս, Ռոտերդամի մենեջմենթի դպրոց

Կաթոլիկ եկեղեցում պառակտում տեղի կունենա հղիությունն ընդհատելու, ֆեմինիզմի և համասեռամոլների իրավունքների հարցերի պատճառով: Անողոք պայքարի արդյունքում առաջին պլան դուրս կգա նոր կրոնական շարժում, որն աստիճանաբար հետ կմղի մնացած շարժումները:

Մ. Ինտրովինյե, Նոր կրոնների ուսումնասիրման կենտրոնի (Հռոմ) նախագահ

ՄԻԳՐԱՑԻԱՆ ՈՒ ՓՈՂԸ

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը հրապարակել է «Միգրացիան աշխարհում» հերթական զեկույցը: Դրանում մասնավորապես նշվում է, որ ներկայումս աշխարհում 200 միլիոնից ավելի միգրանտ կա, եւ ընթացիկ միգրացիոն գործընթացների պայմաններում այդ թիվը արագորեն աճելու է: Սա նշանակում է, որ աշխարհի բնակչության 3 տոկոսը կազմում են միջազգային միգրանտները: Միգրացիայի հիմնական պատճառ է համարվում աշխատանքի փնտրտուքը, ինչը առավել ակտուալ է ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: 2004-ի տվյալներով, միջազգային միգրանտները տարեկան հայրենիք են ուղարկել մոտ 150 միլիարդ դոլար, իսկ ոչ պաշտոնական տվյալներով, այդ թիվը հասնում է 300 միլիարդի: Ընդ որում, կան շատ երկրներ, որոնց պետական բյուջեները զգալիորեն զիջում են միգրանտների՝ հայրենիք ուղարկած տրանսֆերտների ընդհանուր գումարին:

Միգրանտների համար ամենագրավիչ երկիր է համարվում ԱՄՆ-ն: Այդ երկրում է ներկայումս գտնվում ամբողջ աշխարհի միգրանտների 20 տոկոսը: Միգրանտների հոսքի առումով երկրորդ տեղում է Ռուսաստանը: Այնտեղ է գտնվում միգրանտների 8 տոկոսը: Տարբեր տվյալներով, Ռուսաստանում 14-16 միլիոն միգրանտ կա: Ընդ որում, Ռուսաստանի պարագայում միգրանտների զգալի մասը ժամանում է մեծամասամբ ԱՊՀ երկրներից: Մեծ թվով միգրանտներ են ներգրավել Գերմանիան՝ 10.1 միլիոն, Ֆրանսիան՝ 6.5 միլիոն, Մեծ Բրիտանիան՝ 5.45 միլիոն, Իսպանիան՝ 4.8 միլիոն, Իտալիան՝ 2.5 միլիոն մարդ: ԱՊՀ երկրներից, Ռուսաստանից բացի, միգրացիոն մեծ հոսք է տեղի ունենում նաեւ դեպի Ուկրաինա՝ 6.8 միլիոն եւ Ղազախստան՝ 2.5 միլիոն մարդ: Հարկ է նաեւ նշել, որ միգրանտները զգալիորեն փոխում են «ժամանման երկրի» բնակչության էթնիկ կազմը: Այսպես, օրինակ՝ Լյուքսեմբուրգում միգրանտները կազմում են բնակչության 37.3, Շվեյցարիայում՝ 22.9, Ղազախստանում՝ 20 տոկոսը:

Միաժամանակ, ԱՄՆ-ի զեկույցում առանձին անդրադարձ կա նաեւ Հայաստանին: Կազմակերպության տվյալներով, 1998-2003 թվականներին Հայաստանից 700 հազար մարդ է հեռացել: Նկատի առնելով, որ տվյալները 6-ամյա վաղեմության են, ԱՄԿ-ն ընդգծում է, որ միգրացիոն միտումները ներկայումս շարունակվում են, եւ դա ՀՀ լրջագույն խնդիրներից է համարվում: Հայաստանից հեռացածների 75 տոկոսը հաստատվել է Ռուսաստանում, 15 տոկոսը՝ եվրոպական երկրներում, իսկ 10 տոկոսը՝ ԱՄՆ-ում:

Ըստ ԱՄԿ-ի, Հայաստանի սահմաններից դուրս 7 միլիոն հայ կա: Միեւնույն ժամանակ, ԱՄԿ-ն տեղեկացնում է, որ միգրանտների՝ ՀՀ ուղարկած տրանսֆերտները որոշիչ դեր են խաղում ՀՀ տնտեսության համար եւ երկու անգամ գերազանցում են հանրապետության պետական բյուջեն:

Արձակ

Վրեժ

Մեկ ամիս է՝ ուսանողներով Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում էինք:

Իբր՝ գործնական պարապմունքների: Որքան էլ հետաքրքիր, եկավ մի պահ, երբ օրերն ասես սկսել էին կրկնվել: Ինչ-որ բան փոխել էր պետք: Ու Ռուբենի հետ որոշեցինք՝ կմեկնենք Ռիգա և օրերն այլևս չեն կրկնվի: Ճանապարհորդելով մարդու և՛ աչքն է բացվում, և՛ սիրտը...

Ռուբենըքչախոսէր,հատկապես՝անծանոթների շրջապատում: Կատակում էին՝ շատ չի խոսում սխալվելու հավանականությունը չմեծացնելու վախից: Ավելի շատ աղջիկների հետ շփվելուց էր խուսափում: Դեռ նոր-նոր գյուղից եկած ուսանող՝ փողոցում փորձել էր մի աղջկա սիրահետել: Ապարդյուն:

- Ի՞նչ է, սիրուն չե՞մ, - վերջին ճիգն էր գործադրել Ռուբենը:

- Սիրուն ես, համա թե քիչ ես, - աղջիկն ակնարկել էր նրա փոքրամարմին լինելը:

Եվ այդ օրվանից երևի վիրավորվել, ամփոփվել էր ինքն իր մեջ:

Հիմա Ռուբենի հետ թռչում ենք մեզ համար անծանոթ քաղաք: Ռուբենի հետ, քանի որ որքան էլ քչախոս, բայց հավատարիմ ընկեր էր...

Որտե՞ղ պիտի գիշերենք. հարցը ծագեց վայրէջքից հետո՝ ճաշարանում, երբ քաղցը մեզ համար արդեն արհամարհած էր ու ժամանակն էր հանգստի մասին մտածել:

- Հյուրանոցներում տեղ փնտրելը, այն էլ ամռանը, իզուր է, - ասաց Կոլյա Մակեևը, որը մեզ ընկերակցել էր ինքնաթիռում, և մտադրվել արձակուրդն անցկացնել Հայաստանում:

- Եկեք բախտներս ուսանողական հանրակացարաններում փորձենք, - առաջարկեցի ես:

Հետո Աստված ողորմած է... Այսպես բարձրաձայն տարբերակներ էինք մտմտում, երբ կողքի սեղանից մոտեցավ 24-25 տարեկան, սիրունատես մի աղջիկ.

- Տղանե՛ր, դուք բախտավոր եք, - ասաց ու բանալին դրեց սեղանին: - Անունս Ստելլա է:

Մեկ շաբաթով բացակայելու եմ քաղաքից, կգնաք Ռայնիսի փողոց, երկհարկանի միակ շենքն է, կօթևանեք իմ բնակարանում...

Այդպես երևի թե հեքիաթներում է լինում, բայց և պատեհ ակնթարթը ծանրութեթև անելը պարապ գործ էր: Մեզ ի՞նչ էր մնում. գտանք շենքը, գտանք բնակարանը՝ մաքուր, կոկիկ, ժամանակակից թեթև կահույքով, դաշնամուրով:

- Երևի Աստված է նախանշել մեր ուղին, հետևապես այն կատարյալ է, - փորձեցի ցրել տղաների տարակուսանքը:

Հայտնվել էինք դրախտում: Բայց ո՞վ էր այդ սիրունիկը, ինչո՞ւ հանկարծ իր տան բանալին վստահեց անծանոթ տղամարդկանց: Կոնկրետ մտքի հանգելը ձեռքի մեջ քամի հավաքելու նման անարդյունք մի բան էր:

- Ճիշտ կլինի քնենք, - հանգստանանք, - ասաց Կոլյա Մակեևը: - Ինչպես ասում են՝ առավոտը գիշերվանից իմաստուն է, կլուսանա՝ ամեն ինչ իր տեղը կընկնի:

Վատ չէր, որ անորոշության դեմհանդիման երեքով էինք:

Պառկեցինք: Ապահովության համար մուտքի դուռը «պարսպապատեցինք» հագուստի պահարանով:

Լուսացրինք առանց միջադեպերի:

***

Առավոտից իրիկուն թափառում էինք և, տունդարձից հետո միայն հասկանում, որ հոգնել-ջարդվելը հաճելի զբաղմունք է, երբ կարող ես անփույթ փռվել մահճակալին: Մարմինդ խոնջանք է առնում, իսկ ուղեղդ գործում է՝ հիշեցնելով, թե որքան նեղ են մեր իմացությունների սահմանները: Այս կյանքում մենք միշտ ինչ-որ բան չգիտենք: Ու լավ է, որ չգիտենք: Ուրեմն որոնել է պետք, այլապես միտքդ, հոգիդ կժանգոտեն: Կոնկրետ մեր առջև ծառացել,անլուծելի էր մնացել ամենագլխավոր առեղծվածը՝ ինչո՞ւ հանկարծ անծանոթ քաղաքում, թեկուզև ժամանակավոր, բնակարան ունեցանք: Մտորումները մեզ չեն լքում, երբ մի օր էլ դուռն անաղմուկ բացվեց:

Շեմին մեր բարերարն էր:

- Կարելի՞ է, - ժպտաց:

- Ձեր տուն մտնելու համար թույլտվություն մեզնի՞ց, - շփոթվեցինք: - Տունդարձի տոմսերը գնել ենք, վաղը գիշերը կթռչենք…

- Ուրեմն ևս մեկ օր այս բնակարանը ձերն է, - ասաց: - Կգիշերեմ ընկերուհուս մոտ:

Հաջորդ օրը, մեր ծանոթության ու բաժանման առիթով, Ստելլային ընթրիքի հրավիրեցինք:

Պարտավոր էինք շնորհակալություն հայտնել և, իհարկե, փորձեցինք բացել մեր հյուրընկալվելու գաղտնիքը:

- Ավիացիոն ուսումնարանի սաներից մեկը սիրահարվել էր, - երկար խնդրել չտվեց Ստելլան:

- Բայց ինձնից անհամեմատ ջահել էր և չէի կարող պատասխանել: Հաճախ էր այցելում: Թեյում էինք, զրուցում: Ինչպես ասում են՝ ամենասովորական բարեկամությունից ոչ մի քայլ այն կողմ: Նման այցելություններից մեկը, սակայն, տխուր ավարտ ունեցավ: Երբ բացեցի մուտքի դուռը՝ թեյի պատրաստության համար, վրաս, ինչ-որ ձևով շրջանակում ամրացված ամանից, կեղտաջուր թափվեց: Քիչ է ասել՝ տհաճ էր: Անզորությունից լաց եղա: Ո՞վ կարող էր լինել: Երկար փնտրելու կարիքը չունեի, կասկածում էի մեր հարկում ապրող հիսունն անց կնոջ վրա, որը կյանքը լիարժեք վայելելու հույսի վերջին փշրանքներն էր սպառում: Զգացել էի՝ նախանձով էր հետևում ապագա օդաչուի այցելություններին: Ենթադրությունս չիհերքվեց: Նախանձի չարությունն անողոք է: Հիմա, ցուցադրաբար, նրա խանդը բորբոքելու համար, ջանում եմ, որ բնակարանիս դուռն այսպես միշտ բաց լինի... տղամարդկանց առջև:

***

Այսպես դժվար մեկնելի, թերևս այդ պատճառով հրապույրներով լի է կանացի հոգին: Ինչպես և ենթադրում էի, Ռուբենն անհուսորեն սիրահարվեց Ստելլային: Սակայն հաջորդ գիշեր արդեն ստիպված էինք թողնել Ռիգան:

Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԼԵՋԻ ԿԱՐՈՅԻ ՎԱՐԴԱՋՐՎԱԾ ԱՐԿԱԾՆԵՐԸ

☺☺☺

Բլեջի Կարոն կոլտնտեսությունում վարորդ էր աշխատում: Երբ գյուղում մեռել էր լինում, ձմռան բքին էլ կոլտնտեսությունը նրան Ախալքալաք էր ուղարկում դագաղ բերելու:
Մի անգամ դագաղ պատրաստող վարպետն ասաց.
- Կարո ախպեր, որպեսզի էս ձմռան բուք ու բորանին այսքան երկար ճանապարհ չկտրես գաս, արի կլինի մի քանի հատ դագաղ տար ձեր մարագը պահի, որ ձմեռը հանգիստ տանը նստես:
- Այ վարպետ ջան, լավ բան ես ասում, համա մեր գեղացիք իրենց մեռելը առանց դագաղի կթաղեն, ինձանից դագաղ չեն տանի:

☺☺☺

Բլեջի Կարոն շատ խոսող մի երիտասարդի հարցրեց.
- Անունդ ի՞նչ է:
- Արշալույս, - պատասխանեց տղան:
- Էդ ինչ թաքցա անուն են դրել քեզի:
- Հորս անունը Արշակ է, մորս՝ Լուսիկ, դրա համար անունս դրել են Արշալույս:
- Ասենք հորդ անունը լիներ Գևո, մորդ՝ Մարո, քո անունը կլիներ գեմարո՞:

☺☺☺

Բլեջի Կարոն իրենց էշը չայիրից տուն էր տանում: Հանկարծ մի «Ժիգուլի» արագ անցավ էշի կողքով, էշը խրտնեց, ժնջիլը դիպավ ավտոմեքենայի ապակուն և այն փշրվեց: Վարորդը Կարոյի հետ երկար վիճաբանելուց հետո ասաց նրան.
- Հարյուր դոլար պիտի տաս ինձ, որ ես նոր ապակի գցեմ:
- Այ տղա, դու պիտի հարյուր դոլար ինձ տաս, որ տանեմ էշի վախը բռնել տամ:

☺☺☺

Բլեջի Կարոյի նորահարսը ղարաբաղցի է: Մի օր հարսը դիմեց կեսրարին.
- Հայրիկ, ճաշ աճեմ կուտե՞ս:
- Աճի թող հերդ ուտի, տո շանորդու աղջիկ, - զայրացած պատասխանում է կեսրարը:

☺☺☺

Բլեջի Կարոյի կովը նախիրից փախչում, տուն էր գալիս: Կարոն մտածեց, մտածեց, ելքը գտավ: Կովի մսուրը մի լավ ավլեց, դրսից մի երկու դույլ մանր քար բերեց լցրեց կովի առաջը: Մի երկու օրից հետո կովին բաց թողեց: Այդ հոյակապ էքսպերիմենտից հետո կովը այլևս նախիրից չէր փախչում, նույնիսկ իրիկունն էլ տուն չէր գալիս:

☺☺☺

Մի անգամ Բլեջի Կարոյի ծանոթներից մեկը ասաց.
- Կարո, ես քո տղաներին ճանաչում եմ:
- Որի՞ն, - հարցրեց Կարոն:
- Ռուբիկին, Երվանդին:
- Էդոնց ես լե կճանչնամ:

☺☺☺

Բլեջի Կարոն ուրախ-ուրախ գնում է գյուղամեջ:
- Կարո, էդ ինչո՞ւ ես այդպես ուրախ, - հարցնում է ընկերներից մեկը:
- Էշս կորել է, - ասում է Կարոն:
- Էշդ կորել է, իսկ դու ուրախանո՞ւմ ես:
- Ըբը որ ես վրեն եղնեք:

☺☺☺

Բլեջի Կարոյի հորթերից մեկը կապը կտրում փախչում է: Կարոն գալիս է գոմում կապած մյուս հորթին է սկսում ծեծել: Հարևանը հարցնում է.
- Կարո, էն հորթն է փախել, իսկ ինչո՞ւ ես սրան ծեծում:
- Սրան էլ որ բաց թողնեմ նրանից բեթար կփախչի:

☺☺☺

Հայաստանցի մի առևտրական միրգ էր վաճառում, նաև ապրանքափոխանակություն էր անում: Միրգը փոխում էր կարտոֆիլով, հավով, սագով, բադով... Բլեջի Կարոն իր առած մրգի դիմաց մի սագ է տալիս առևտրականին ու ասում նրան.
- Ախպեր ջան, մեր սագը իսկի ավտո նըստած չունի, զգույշ եղեք սիրտը հանկարծ չվատանա:

☺☺☺

Բլեջի Կարոն գնում է հարևաններից մեկի տուն: Նրան ձվածեղ են առաջարկում: Կարոն հրաժարվում է նրանց առաջարկությունից ու ասում.
- Շողոն էնքան հավկիթ է կերցրել, խորոզ որ կտեսնամ կպպզիմ:

☺☺☺

Բլեջի Կարոյի հարևանի տղան սովորում էր Ռոստով քաղաքի երկաթգծի տեխնիկումում: Կարոն լսել էր, որ տղան տեխնիկումը հաջող ավարտել է, շուտով տուն է գալու: Կարոն դիմեց հարևանին.
- Հարևան ջան, զանգիր տղային, որ պառավոզը չբերի հետը, մեր մայլայի փողոցը անչափ նեղ է, սաղ պատերը կքանդի:

☺☺☺

Բլեջի Կարոն գյուղամիջում հանդիպեց գույնը գցած, կարճահասակ, նիհար Լևոնին ու հարցրեց.
- Լևոն, ինչո՞ւ ես մունաթդ կախել, ի՞նչ է պատահել:
- Կարո ջան, վատ հիվանդ եմ, երթամ պիտի Դուկասյան կույր աղիքս հանել տամ:
- Այ տղա էդպես բան չանես, կույր աղիքդ որ հանես, փորդ կդատարկվի, - խորհուրդ է տալիս Կարոն:

☺☺☺

Բլեջի Կարոն նոր էր խոպանից վերադարձել: Ընկերներից մեկը մոտեցավ հարցրեց նրան.
- Կարո, խոպանից հաջողությունը ո՞նց է:
- Ընկեր ջան, բրիգադի անդամները բոլորն էլ ձախլիկ էին, էլ ինչ հաջողության մասին կարելի է խոսել - պատասխանում է Կարոն:

☺☺☺

Բլեջի Կարոյի նորափեսան Կարոյին հայրիկ էր ասում: Կարոն մի քանի անգամ զգուշացրեց նրան, որ այլևս իրեն հայրիկ չասի: Բայց փեսան դարձյալ շարունակ կրկնում էր:
- Փեսա ջան, հայրիկ ասելուդ բան չունեմ ասելու, բայց մայրդ որ լսի կնեղանա:

☺☺☺

Բլեջի Կարոն ծեծել էր հարևաններից մեկին: Գործը հասել էր դիվանբաշուն: Այդ կապակցությամբ շրջանային ՆԳ բաժնի աշխատողների կողմից զգուշացվել էր: Կարոն խոստացել էր, որ այլևս ձեռք չի բարձրացնի իր հարևանի վրա:
- Կարո, դուք խոստացել էիք, որ այլևս ձեռք չեք բարձրացնի ձեր հարևանի վրա: Իսկ ինչո՞ւ կրկնվեց, - հարցրեց ՆԳ բաժնի աշխատողը:
- Ընկեր միլիցիոներ, ճիշտ եք ասում, խոստացել էի, բայց այս անգամ նրան խփել եմ ոտքով, ոչ թե ձեռքով:

☺☺☺

Բլեջի Կարոն գյուղամեջ է եկել երեսի մի կողմը թրաշած, մյուս կողմը՝ անթրաշ:
- Կարո, ինչո՞ւ երեսիդ մի կողմը չես թրաշել:
- Հայելի չկար, ուրեմն երկու անգամ մի կողմն եմ թրաշել:

☺☺☺

Բլեջի Կարոն գնում է Ապարան իր խնամիներին այցելության: Գիշերը ճանճերը անհանգստացնում են խնամի Կարոյին: Առավոտը ապարանցի խնամին իր համագյուղացիների հետ գյուղից քշում են կծող ճանճերին: Ու պայթեցնում են կամուրջը, որպեսզի ճանճերը հետ չգան:

☺☺☺

Հայրը ծայնեց որդուն.
- Տղա Թաթուլ, գնա գլուխտի դիր նոր արի, դուրսը ցուրտ է:
Բլեջի Կարոն լսելով այդ հետաքրքիր արտահայտությունը, ասաց.
- Զարմանալի է անչափ, ուրեմն էդ խեղճ երեխան գլուխը թողել էր տանը ու անգլուխ դուրս եկել տանից:

☺☺☺

Դրսում հորդառատ անձրև էր գալիս, Կարոն անհանգիստ ետ ու առաջ էր անում սենյակում: Կինը նկատեց նրա անհանգստությունը ու ձայն տվեց.
- Կարո, մի տեղ նստիր, ինչո՞ւ ես անհանգիստ:
- Տո էս անտեր անձրևը չկտրվեց, որ ելնիմ բոստանը ջրեմ:

☺☺☺

Բլեջի Կարոյի ընկերները հարցնում են.
- Կարո, երեկ ինչո՞ւ չէիր եկել թաղման:
- Ես ուրիշի տուն չմերտամ, ձեր տունը եղներ, մեծ ուրախությամբ կմասնակցեի:

Դիվին ՔԱՇԱՆՅԱՆ

Ироническое армянское фэнтези-1

Однажды Мартиросу стало грустно. Из-за того, что мир несовершенен. И нет в нем ни гармонии, ни красоты. А есть тупость, глупость, зависть, хитрость и порок. И так обидно стало Мартиросу, что из левого глаза упала скупая мужская слеза.

- Ты мне изменил, Мартирос? - сразу насторожилась жена.

- Нет, - с сожалением вздохнул Мартирос.

- Изменил Родине? - чуть помягче спросила она.

- Нет, - возмутился Мартирос.

- А чего переживаешь? - полюбопытствовала жена.

- Из-за несовершенства мира, - признался Мартирос. И по правой его щеке покатилась еще одна скупая мужская слеза.

- Дурак ты, Мартирос, - вынесла свой вердикт жена. -Ты же не волшебник, чтобы изменить мир, правда? Да и мы живем в Ереване, а не в сказке какой-нибудь.

Мартирос покивал, соглашаясь с женой. Он всегда с ней соглашался, потому что знал, что спорить глупо. Все равно, в итоге она все поворачивала так, что он оказывался в дураках. Но мысль о волшебнике крепко засела в мозгу у Мартироса. Настолько крепко, что он захотел узнать, где обучают волшебству. Короче, Мартирос втихаря решил стать волшебником. И изменить мир к лучшему. Бедный Мартирос...

Три месяца Мартирос расспрашивал всех знакомых и незнакомых, есть ли где школа волшебников, в которой обучают тому, как делать мир лучше. И знакомые, и незнакомые в один голос заверили, что такой школы в Армении точно нет. Но зато есть Гарри Поттер, который живет в Англии и считается перспективным молодым магом. Мартирос пошел в посольство Великобритании и заявил, что хочет обучаться в школе Гарри Поттера. На деньги Гарри Поттера или правительства Великобритании. В посольстве его приняли за сумасшедшего. Или за хорошо законспирированного шпиона. И отказали во въезде. Взгрустнул Мартирос, но не потерял присутствия духа. И ввиду отсутствия школы волшебства в родном Ереване решил обучаться самостоятельно. Пошел он на Вернисаж и отдал десять тысяч драмов за книгу «Волшебство и магия в современном мире». Автором книги был известный армянский маг с греческими корнями, который в прошлой жизни был графом Калиостро, а в позапрошлой - жрецом храма Аполлона в Греции. Но в предисловии было написано, что он вообще не с планеты Земля. Мартирос не знал ни Калиостро, ни Аполлона, понятия не имел о прошлых жизнях, но ему понравились иллюстрации к книжке. Поэтому он принес ее домой, спрятал подальше от глаз жены и читал только конспиративно, в туалете, после завтрака. Физические и интеллектуальные потуги, конечно же, дали свои плоды. Через месяц Мартирос решил, что он овладел волшебством настолько, что может улучшить жизнь своих сограждан. И свою собственную тоже. В Парке влюбленных Мартирос нашел палочку, выстругал ее точно по инструкции, описанной в книге, и стала она волшебной. По крайней мере, так думал Мартирос. И с этой палочкой пошел он на площадь Республики. Встал перед Домом правительства и хотел было взмахнуть ею, но тут, как из-под земли, перед ним вырос полицейский.

- Чем это ты занимаешься, Мартирос? - полюбопытствовал блюститель общественного порядка.

- Улучшаю жизнь, - ответил Мартирос. - Я теперь маг и волшебник.

- Да ну? - удивился полицейский. И, культурно взяв Мартироса за воротник, посоветовал: «Шел бы ты улучшать жизнь в другом месте, Мартирос».

Как законопослушный и неконфликтный гражданин, Мартирос последовал совету полицейского и пошел домой. Он решил применить магию и волшебство для того, чтобы улучшить свою жену. Сделать ее более красивой и менее брюзгливой. Для начала. Как только она открыла дверь, Мартирос взмахнул палочкой у нее перед носом, не заметив, что в руках у нее швабра. И тут же тонкая палочка из Парка влюбленных была выбита из его рук толстой шваброй. Благими намерениями, как известно, вымощена дорога в ад...

- Ты хотел меня убить этой палкой? - вкрадчиво поинтересовалась жена.

- Я хотел сделать из тебя принцессу, - попытался оправдаться Мартирос.

- Дурак ты, Мартирос, - вздохнула жена. - Во всем Ереване только ты мог поверить, что палка может превратить женщину в принцессу. И потом, разве принцесса станет жить с таким олухом, как ты?

Плечи Мартироса поникли. Он ощутил на них всю тяжесть мира. Но искорка в душе все же осталась. Как только жена ушла в магазин покупать сахарный песок для варенья, он склеил волшебную палочку и всю последующую неделю пытался улучшить жизнь соседей, знакомых и родственников. Но все они смеялись над ним. Никто не верил, что при помощи поломанной палки можно творить волшебство. Оттого ничего и не вышло. Ничья жизнь не улучшилась. И все осталось по-старому. Разве что Мартирос начал видеть сны, в которых волшебство все же существовало. Но то были всего лишь сны.

Арам ЯВРУМЯН.

МУДРЫЕ РАЗМЫШЛЕНИЯ

За деньги можно купить дом, но не семью.
За деньги можно купить кровать, но не сон.
За деньги можно купить часы, но не время.
За деньги можно купить книгу, но не знания.
За деньги можно купить еду, но не аппетит.
За деньги можно купить положение, но не почет.
За деньги можно купить лекарство, но не здоровье.
За деньги можно купить секс, но не любовь.
За деньги можно купить страховку, но небезопасность.

«Горцарар»
Издается с июля 1999г.
Автор проекта- Ваграм БЕКЧЯН
Зам. гл. редактора - Роза ГУЛЯН
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Ռոզա ՂՈՒԼՅԱՆ
ИЗДАТЕЛЬ
Издательский Дом «ШАГАНЭ»
Лицензия серия ИД № 02313
Журнал зарегистрирован в Министерстве Российской Федерации по делам печати, телерадиовещания и средств массовых коммуникаций
Регистрационный номер ПИ № 77-5015
Авторские материалы не рецензируются и не возвращаются. Переписку с читателями редакция не ведет. Мнение авторов может не совпадать с мнением редакции.
Материалы со знаком Գ публикуются на правах рекламы.
Редакция не несет ответственности за содержание рекламных объявлений.
ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО
Отпечатано
ОАО «Калужская типография стандартов»
Формат А3, объём 4,0 п.л.
Тираж 1 500 экз. Зак. № 1742.
Территория распространения: Российская Федерация, страны СНГ, зарубежные страны.
В номере использованы материалы «НОЕВ КОВЧЕГ», «АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР», «hАЙКАКАН ЖАМАНАК», «ИРАВУНК», «ВОЗНИ», «НОВОЕ ВРЕМЯ».
Цена свободная.

Адрес редакции:
248001, г. Калуга, ул. Суворова, 160.
Тел.: (4842) 56-59-29, 59-17-73.
E-Mail: gortsarar@list.ru
факс (4842) 565-929,
www.gortsarar.ru



E-Mail: bshahanev@kaluga.ru